






50 4

90 (47 125) (092 Բազմաթիւ Բյուզանդ.)

5-15

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԲԻԼԻՅԱՆԴԻ ՊԸՏՄՈՒԹԵԱՆ

A $\frac{\pi}{33712}$

ԳՐԵՑ

ՍՏԵՓԱՆ ՄԱԼԽԱՍԵԱՆ

ՎԻԵՆՆԱ 1896

ՄԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ
ՓԱՆՍՏՈՍ ԲԻՐԶԱՆԳԻ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ա.

Փառաստուի սրտամոխթեան հեղինակի, անոս սկզբնադրի, շեղուի եւ գրութեան ժամանակի մասին անոսագոյն կարծիքներն ու անոս քննութիւնը:

Փառաստուի պատմութիւնը հայ բանասիրութեան համար երկար ժամանակից ի վեր մի առեղծուած է եղել: Թէ երբ է գրուած այդ պատմութիւնը, ո՞վ է նորա հեղինակը եւ ինչ լեզուով է պատմագրել՝ այս խնդիրները մասին կարծիքները տարբեր են եղել: Ոմանք հեղինակին հայ են համարել, ոմանք յոյն եւ ոմանք նոյն իսկ ենթադրել են երկու հեղինակ — յոյն եւ ասորի. եւ հեղինակի ազգից էլ դատելով՝ պատմութեան սկզբնական լեզուն համարել են հայերէն,¹ յունարէն եւ ասորերէն. իսկ պատմութեան գրութեան ժամանակը բոլորը, բաց ի Հ. Գաթրքեանից, համարել են Դ. դարի վերջերը: Բայց վերջին ժամանակներս, երբ Փառաստ. պատմութեան նշանակութիւնը բարձրացաւ, եւ բանասիրութիւնն սկսեց աւելի մանրա-

1 Այս տեսակէան ունեցող բանասէրներին մէջ յիշելու է մանաւանդ Հ. Յ. Վ. Գաթրքեանին, որ հեղինակին համարում է Սահառունեաց առհմից մի հայ, որ օգտուած է Փառաստու Բիւզաս անյայտ յոյն ժամանակագրի գրուածքից եւ գրել է իւր պատմութիւնը հայերէն լեզուով. Խորենացուց իբր 60 տարի առաջ: Տես «Հանդէս ամսօրեայ», 1889, մարտ, եր. 40—43:

ման հետազոտել վերոյիշեալ խնդիրները՝ ընդհանրացաւ այն կարծիքը՝ թէ հեղինակը յայն է, եւ յատկապէս այն հոռում փաւստոս եպիսկոպոսը, որ պատմութեան մէջ յիշուում է երեք տեղ. այս հիմնական տեսակէտից բնականապէս եզրակացուեցաւ, որ ուրեմն պատմութիւնը գրուած է Գ. դարի վերջերում, յունարէն լեզուով:

Քանի որ Փ. պատմութիւնն այսօր մեծ կարեւորութիւն է ստացել մատենագրական եւ պատմական տեսակէտից՝ մենք հարկ ենք համարում մի անգամ եւս քննութեան ենթարկել յիշեալ խնդիրները, որոնց այս կամ այն կերպ լուծումը ազդեցութիւն ունի եւ պատմութեան ճիշդ գնահատութեան, ուրեմն եւ նորա մատենագրական եւ պատմական արժէքի վերայ: Մեր այս յօդուածում սահմանափակուում ենք յիշեալ խնդիրների քննութեամբ, զանց անելով ուրիշ, ոչ նուազ կարեւոր խնդիրներ Փ. պատմութեան վերաբերութեամբ, ինչպէս են բնագրաքննութիւնն, մատենագրական եւ պատմական ուսումնասիրութիւնն:

Այն բանասերները, որոնք Փ. պատմութեան հեղինակին յոյն են համարում եւ պատմութիւնը գրուած յունարէն, Գ. դարի վերջերում՝ են Հ. Գ. Ջարբհանէլեան,¹ Խ. Մ.² եւ Ա. Գարագաշեան:³ Նոցա հիմքերը հետեւեալներն են. —

1. — Զ. դպրութեան ցանկի վերջում հետեւեալ խօսքը կայ. «Ստորոտ ամենայն պատմութեանց յաղագս իմ տեղեկութեան, որ միանգամ զմատեանս ընթեռնոյք տունք տասն՝ համարական թուօք»: Այս խօսքը առաջ հասկանում էին այս

¹ Պատմ. Հայ. դպրութեանց, Բ. տպ., եր. 222—232:

² «Փաւստոս Բուզանդ», Վիեննա, 1890:

³ Քննական պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1895. հար. Բ., ԳԼ. Գ. եւ այլուր: — Առանձնակի կարծիք ունին Հ. Բ. Սարգիսեան («Ագաթանգեղոս եւ իւր բաղմադարեան դաշտնիք», եր. 298—299) եւ Նորայր Բիւզանդացի («Քննասեր», 1887, Պրակ Առաջին, եր. 17—60):

մտքով, թէ հեղինակը խոնտանում է իւր պատմութեան վերջը տասն տուն (ստանաւորով) տեղեկութիւն տալ իւր մասին. եւ որովհետեւ գրքի վերջում այս տասն տունը չկայ՝ ենթադրում էին, որ մեզ հառաժ ֆ. ձեռագիրները թերի են վերջից։ Սակայն նոր ժամանակներս բանասէրները ուրիշ մեկնութիւն են տալիս այս խօսքին։ Նկատելով որ Ջ. դպրութեան Ե. եւ Ջ. գլուխներում յիշատակուում է փաւստոս եպիսկոպոս, իսկ այնուհետեւ մինչեւ գրքի վերջը յաջորդում են տասն գլուխ՝ նոքա վերոյիշեալ խօսքը թարգմանում են այսպէս. «Իմ մասին տեղեկութիւններ բովանդակող բոլոր գլուխներից յետոյ ընթերցողներդ կը գտնէք թուով տասը գլուխ.», (Ե. Մ.) կամ «Ստորոտ (վերջ) բովանդակ պատմութեանս։ Յազադս իմ տեղեկութիւն, որոց ընթեռնուն զմատեանս՝ եւ այլ եւս տասն գլուխը.», (Ա. Գարագաշեան.) (այսինքն՝ վերջ պատմութեան, յետոյ իմ մասին տեղեկութիւն, եւ այնուհետեւ դարձեալ տասն գլուխ) — Եթէ «Ստորոտն» այսպէս հասկանալու լինինք եւ հեղինակի իւր մասին խոստացած տեղեկութիւնը փնտռելու լինինք Ջ. դպր. Ե. եւ Ջ. գլուխներում՝ հեղինակի աղգութեան մասին այլեւս տարակոյս չի մնայ. որովհետեւ Ջ. գլխում յայտնապէս ասուած է. «Եւ էին սոքա (փաւստոս եպիսկոպոս եւ եղբայրնորա Առոստոմ) աղէս — Հոռոմ։»

2. — Գ. դպրութիւնը այսպիսի վերջաբանութիւն ունի. — «Կատարեցաւ երրորդ դարը... Փաւստեայ Բիւզանդեայ ժամանակագիր մեծ պատմագրի, որ էր ժամանակագիր Յռնոց»։ Այստեղ էլ, բանասէրների կարծիքով, յայտնապէս վկայուում է, թէ պատմութեան հեղինակը, Փաւստոս Բիւզանդացին, յոյն է։ (Հ. Ջարբհանէեան, Ա. Գարագաշեան։)

3. — Ջանաղան պատմական դէպքեր հեղինակը աւանդում է «տարբեր յայլոց պատմչայ

բանից, որ համազգւոյ մը համար անկարելի էր. հեղինակի աւանդածները “բոլորովին կ’օտարանան յայլոց պատմաց, եւ մանաւանդ ի խորենացւոյն... եւ բաւական են հաւատարմացնելու թէ աղգային պատմի մը համար անկարելի է այդպիսի անգիտութիւն” (Հ. Զարբհանէլեան):

4. — Հեղինակը “չափազանց ատելութեան ոգի մը ունի ընդդէմ Հայոց, հընցած ատելութիւն մը, որով միշտ առիթ կը փնտռէ մեր աղգը վար զարնելու”։ Նա “ոչ երբէք իր Պատմութեան մէջ աշխարհն Հայոց, Խաչատուրն Վեր կը գրէ, այլ պարզաբար աշխարհն Հայոց, Խաչատուրն Հայոց եւն։ Իսկ եթէ Յունաց վըսպ ըլլայ խօսքը, ասանկ կը գրէ. Վե՛ր Խաչատուրն Յունաց, Վե՛ր Աթենացոց Կոլոս”։ (Հ. Զարբհանէլեան):

5. — Հեղինակն այնպիսի մանրամասնութիւններ է պատմում Մանուէլի եւ Մերուստանի կռուի մասին, որ “կը թուի թէ ակնատես էր պատմիչն այս պատերազմին դիպաց”։ (Ա. Գարազաշեան, Գ. եր. 179)։ Նոյնպէս Ե. Մ. (եր. 51) Ս. Ներսէսի կեանքի վերջին ժամերի նկարագրութիւնը համարում է ակնատեսի կամ ժամանակակիցի գործ։

Ընդունելով հեղինակին յոյն եւ ժամանակակից Դ. դարի անցքերին՝ բանասէրները որոշում են եւ պատմութեան գրութեան ժամանակը մերձաւորապէս Ե. Մ. համարում է այդ պատմութիւնը գրուած “ոչ ուշ քան 391 թուականը”։ որովհետեւ հեղինակը “յիշում է Զաւէնի եւ Շահակի տարիները, բայց Ասպուրակէսի հայրապետութեան տարին չէ յիշում, ուրեմն այդ կաթողիկոսի կենդանութեան ժամանակ է նա գրել իւր պատմութիւնը”։ Ա. Գարազաշեան (Գ. 184) հեղինակին համարում է մեռած Արշակունեաց թագաւորութեան բաժանումից քիչ յետոյ, դեռ եւս խոսրովի եւ Արշակի կենդանութեան ժամանակ

նակ, որովհետեւ “չգիտեր զպատերազմն, որ ծաղեցաւ այս երկու թագաւորաց մէջ, զմահն Արշակայ եւ զսպառսպուռ բարձումն թագաւորութեան նորա,” ուրեմն 384-ից յետոյ, երբ բաժանումը տեղի ունեցաւ, եւ 386—387-ից առաջ, երբ ըստ Ա. Գարադաշեանի (Գ. 189) մեռաւ Արշակ եւ Յունաց բաժնի թագաւորութիւնը վերացաւ:

Պատմութիւնն այս ժամանակ, այսինքն Գ. Գարի ութմանական թուականների երկրորդ կէսին գրուած են թագրելով՝ բանասերները բնականապէս եղբակցնում են, որ նա պէտք է գրուած լինէր ոչ հայերէն, այլ յատկապէս յունարէն, որովհետեւ հեղինակը յոյն էր, եւ Գ. Գարում հայերէն գրելու հնարաւորութիւն չկար: Մի բանաւոր (Ե. Մ.) բերում է Փ. պատմութիւնից նաեւ մի քանի նմուշներ յունաբանութեան եւ յունարէն բառերի, որոնք, նորա կարծիքով, մատնում են հայ թարգմանչի ձեռքի տակ եղած յունարէն սկզբնաղբիւր:

Քննենք այս կէտերն համառօտիւ:

1. — “Ստորոտի” այն մեկնութիւնը, որ Ե. Մ. եւ Ա. Գարադաշեան տալիս են՝ բռնի է եւ ձգձգուած, եւ չէ արդարանում ո՛չ լեզուի քերականութեամբ, ո՛չ լեզուի բառերով, ո՛չ մատենագրելու սովորութեամբ եւ ո՛չ ժամանակագրական հաշուով: Յարգելի բանասերները, զայթապդուելով Փառսպոս Բիւզանդացի եւ “Փառսպոս եպիսկոպոս հռոմ,” անունների նմանութիւնից՝ կամեցել են որեւէ կերպով նրանց նոյնացնել, եւ օգտուել են այն լոկ պատահական հանգամանքից, որ մի կողմից հռոմ Փաւստոս եպիսկոպոսի մասին տրուած տեղեկութիւնից յետոյ դաս էր կայ մինչեւ զբքի վերջը, եւ միւս կողմից հեղինակը խոստանում է գրքի վերջում դաս դաս տեղեկութիւն տալ իւր մասին: Ե. Մ.-ի մեկնութիւնն

ընդունելու համար՝ առ նուազն պէտք է ունենայինք գրուած. «Ի սորորոյի ամենայն պատմութեանց յաղագս իմ տեղեկութեան եղեւ լի տունք տասն», թէպէտ այստեղ էլ անկանոն կը լինէր «սորոր» եւ «ոն» բառերի գործածութիւնը: Մեր հեղինակի նման հայկաբանը չէր գրի «ի սորորոտի», փոխանակ «զինի», «յետ» բառերին. չէր գրի «տունք», փոխանակ գրելու «գլուխք», կամ մանաւանդ «կանոնք», ինչպէս միշտ գործ է ածում «գլուխ» բառի նշանակութեամբ: Փաւստոսի պատմութիւնը լեզուի նկատմամբ սքանչելի հայկաբանութիւն է, եւ անկարելի է ենթադրել, որ նա այս երկու-երեք տողում համաձայնական սխալ անէր, զեղչէր ասացուածը, (մինչդեռ նա միշտ աւելորդաբան է), եւ երկու բառ գործածէր այնպիսի նշանակութեամբ, որ անսովոր է թէ՛ իրան եւ թէ՛ առ հասարակ ոսկեղէն դարի լեզուին: — Ա. Գարագաշեան պարզապէս ուղղագրում է բնագիրն այն կերպով՝ որ իւր նախաւեալ գիտմանը յարմարեցնէ. — «յաղագս իմ տեղեկութիւնն, ... է- այլեւս տասն գլուխ»: Այսպիսի կամայական ուղղագրութիւններով՝ ամէն մի խօսքի կարելի է տալ ուրիշ նշանակութիւն. «Ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր» խօսքը կարելի է ուղղագրել՝ «Ի սկզբանէ արարաւ Աստուած, ապա երկին եւ երկիր», երբ բնագրի մէջ աղաւաղութեան հետք չկայ, երբ խօսքը, ինչպէս որ գրուած է, ունի պարզ որոշ նշանակութիւն՝ ի՞նչ իրաւունք ունինք նրան ծռմուելու եւ տալու նորան ուրիշ, թեքանկացած նշանակութիւնը, որ խօսքն ինքն ըստ ինքեան չունի: Սակայն Ա. Գարագաշեանը չէ էլ պնդում այս մեկնութեան վերայ, խոստովանելով որ նա կարող է բռնի համարուել. (Բ. 68:) Առանց կանխակալ կարծիքի կարգալով այդ վիճելի խօսքը — «Ստորոտ ամենայն պատմութեանց: Յաղագս իմ տեղեկութեան ... տունք տասն համարական

թուօք» — ուրիշ կերպ չենք կարող հասկանալ՝
քան այսպէս. «վերջ բոլոր պատմութիւնների: Տասն
տուն (չափաբերական տողերով⁶) տեղեկութիւն
իմ մասին», Այսինքն, պատմութեան գլուխների
ցանկը գնեւորց յետոյ, որոնք բոլորն էլ սկսուում են
յաղափ բառով՝ հեղինակը նկատում է, որ այդտեղ,
Ջ. դպր. Ժ.Ջ գլխով, վերջանում են բոլոր պատ-
մութիւնները, — Ստորոտ ամենայն պատմութեանց.
— ապա մի կենսագրական յաւելուածի վերնա-
գիրն է գնում ցանկի վերջը, դարձեալ սկսելով
յաղափ բառով, — «Յաղագս իմ տեղեկութեան»,
եւ որոշում է, որ այդ տեղեկութիւնը բաղկացած
պէտք է լինի տասն տունից: Այս տասն տուն տե-
ղեկութիւնը չկայ մեզ ծանօթ ձեւագիրներում.
կամ հեղինակը մոռացել է (կամ չէ կամեցել)
իրագործել իւր խոստումը, կամ օրինակողները
դուրս են ձգել, իբրեւ գրքի յիշատակարան, որ
պատմութեան հետ կապ չունի:

Բայց բացի լեզուի բռնաղբօսութիւնից՝ ծա-
ղում են եւ ուրիշ անտեղութիւններ, եթէ մի
բոպէ ընդունելու լինինք բանասէրների վերոյիշեալ
մեկնութիւնը: Հեղինակը իւր մասին խոստանում է
տեղեկութիւններ տալ. բայց երբ դիմում ենք այդ
տեղեկութիւնները պարունակող գլուխներին՝ տես-
նում ենք, որ առաջինը (գլ. Ե.) նոյնչափ վերա-
բերում է Փաւստոսին՝ որչափ Ջորթին — երկու
ընկեր եպիսկոպոսների. իսկ երկրորդ գլուխը (գլ.
Ջ.) վերաբերում է ուղղակի Առոստոմ եպիսկոպո-
սին: Իւր մասին տեղեկութիւն տալ խոստացող
մատենագիրը, որչափ էլ զուրկ լինէր գրական ճա-
շակից եւ սովորութիւններից՝ այդ տեղեկութիւնը,
մանաւանդ երբ նա այնքան համառօտ է, կ'ամփո-
փէր թէ գլխում, որ թայն իւր մասին կը լինէր. կ'աւե-
լացնէր նաեւ տեղեկութիւն, թէ ինչ շարժառիթ
իրան ստիպեց պատմութիւնը գրելու, եւ այլ մա-
տենագրական ցուցումներ, ինչպէս սովորական է

մեր միւս մատենագիրներին: Իսկ այդ տեսակ՝ երկու գլխում ցրուած, ուրիշի կենսագրութեան հետ խառն, կամ ուրիշի կենսագրութեան մէջ պատահամբ յիշատակուած տեղեկութիւններ հեղինակի անձի մասին՝ անօրինակ են: Չէ կարելի այնպէս ենթադրել, որ հեղինակը «մենայն պարտաւիր» վասն իմ տեղեկութեան, մեծահնչիւն բառերով կոչէր այն հատուկտոր համառօտ տեղեկութիւնները, որոնք վերաբերում են Փաւստոս եպիսկոպոսին, ոչ միայն Զ. դպր. Ե. եւ Զ. գլուխներում, այլ թէկուզ՝ գրքի միւս երկու տեղերում եղած յիշատակութիւններն էլ միասին առած: Վերջապէս չէ կարելի ենթադրել, ինչպէս ուղիղ գիտում է Ն. Մառ¹, որ մի լուրջ հեղինակ այսպիսի առեղծուած առաջարկէր ընթերցողին լուծելու, «Ստորոտի, խօսքից մակարերելու՝ որ նա իւր մասին խօսելու է Զ. դպր. Ե. եւ Զ. գլուխներում: — Ենթադրելով որ խոստացուած տեղեկութիւնները Ե. եւ Զ. գլուխներում են զետեղուած, այսինքն թէ գրքի հեղինակը հռոմ Փաւստոս եպիսկոպոսն է՝ մենք հանդիսատես կը լինէինք այսպիսի անօրինակ տեղեկութեան. «Յամա խոստովու եւ Արշակայ երկուց թագաւորացն բաժանաւորոցն մինչ դեռ եւս հային նոյս (Փաւստոս եւ Զորթ) հենդաւի», այսինքն հեղինակն ինքն իւր մասին տեղեկութիւն է տալիս, թէ «նա (ինքը) այս ինչ թագաւորների ժամանակ դեռ եւս կենդանի էր:» Ո՞վ իւր մասին գրում է, թէ Ես այս ինչ ժամանակ դեռ կենդանի էի: Դիտելու մի կէտ էլ կայ, որ պատմութեան մէջ երբ հեղինակը Փաւստոս եպիսկոպոսի մասին է խօսում՝ միշտ երրորդ դէմք է գործածում. — «Կոչեցին զճերուռնի եպիսկոպոսն,

¹ О начальной истории Армении Анонима, *գետեղուած «Византийский Временник» հանդիսում, 1894, II. եր. 298:* — Այստեղ հեղինակը այն կարծիքն է յայտնում, որ «Ստորոտը» որեւէ արտագրողի կեղծիք է:

որում անուն էր փառատոս՝» (Գ, Գ.) «Եւ առեալ զմարմին սրբոյն Ներսէսի... պաշտօնեայք եկեղեցւոյն եւ փառատոս եպիսկոպոս եւ պաշտօնէիցն զլիաւոր Տրդաժ...» (Ե, ԻԴ.) «Էր առ այնմ ժամանակաւ փառատոս եպիսկոպոս. սա էր ի տան նորին իբրեւ թելակալ» (Ե, Ե.) «Էր եղբայր մի փառատեայ եպիսկոպոսի» (Զ, Զ.) Այն ինչ երբ հեղինակն իւր մասին է խօսում՝ առաջին դէմք է գործածում. — «Յիւրաքանչիւր իւր գլուխս պարտաւորեցի... զոր ասելոցս եմ» (խօսութեանում թիւն). «Մեք ի մերոմ աստ եղաք... մեր պատմութիւն... հուն մի նշանակեցաք» (Գ, Ա.) «Չասեաք եթէ առաւելովքն նուազագոյն» (Գ, Ժ.) «Յաղագս իմ տեղեկութիւն» (Զ, ցանկ) Դուրս է գալիս մի անբացատրելի հակասութիւն. մի կողմից հեղինակը «Ստորոտի» առեղծուածով յայտնում է, որ ինքը հոռւմ փառատոս եպիսկոպոսն է, իսկ միւս կողմից երբ այդ փառատոս եպիսկոպոսի մասին է խօսում՝ նրան միշտ ներկայացնում է իբրեւ երրորդ, օտար անձ. մի կողմից երբ իւր մասին է խօսում, առանց իւր անունը տալու՝ միշտ ասում է «ես, մեք», իսկ միւս կողմից երբ փառատոս եպիսկոպոսի մասին է խօսում (ուրեմն դարձեալ իւր մասին)՝ միշտ ասում է «նա», մինչդեռ բնականաբար պէտք է խօսէր առաջին դէմքով — «Ես փառատոս եպիսկոպոս, էի ի տան նորին թելակալ, էր իմ եղբայր մի, հոռովք եմք ազգաւ» եւն։ Պարզ է ուրեմն, որ տարբեր անձեր են առաջին դէմքով խօսող հեղինակն եւ հոռւմ փառատոս եպիսկոպոսը։

Բայց փառատոս եպիսկոպոսին՝ պատմութեան հեղինակ համարելու ամենամեծ անտեղութիւնը ժամանակագրական հաշիւներն են։ Ներսէս կաթողիկոսին սարկաւազ ձեռնադրելու համար «կոչեցին զժերմէի եպիսկոպոսն, որում անուն էր փառատոս, եւ տայր (Արշակ) զնա ձեռնադրել սարկաւազ» (Դ, Գ.) 364 թուին փառատոս եպիսկոպոսն

այնքան ծեր է եղել, որ հեղինակը հարկ է համարել նրան բնորոշել «ծերունի» բառով, որին, երեւի իբրեւ աւագագունին եպիսկոպոսների մէջ, հրաւիրում են սարկաւագ ձեռնադրելու կաթողիկոսացու ներսէսին: Ուրեմն պէտք է ենթադրել, որ 364ին փաւստոս եպիսկոպոսը գոնէ իբր 75 տարեկան պիտի լինէր: Այս փաւստոսը Խոսրովի թագաւորութեան ժամանակ, 384ին եւ յաջորդ տարիներում «դեռ եւս կենդանի է եղել», ինչպէս վկայում է հեղինակը (Ձ, Ե.). ուրեմն մօտ 95 տարեկան զաւամեալ ծեր: Պատմութեան հեղինակը վկայում է, որ Խոսրովի բաժնում (այսինքն 384ից ոչ առաջ) կաթողիկոսութիւն արին նախ՝ Ջաւէն 3 տարի, յետոյ Շահակ 2 տարի, (Ձ, գլ. Բ. եւ Գ.) յետոյ «Ասպուրակ ոմն, որ էր այդ քաղցր եւ խոնարհ, բարերար եւ մարդասէր զամենայն աւուրս կենաց իւրոց» (Ձ, գլ. Դ. եւ ԺԵ.): Ուրեմն հեղինակը ոչ միայն Ասպուրակէսի կաթողիկոսանալը գիտէ, այլ եւ նորա ընթացքը բոլոր կեանքի ժամանակ, եւ անցեալով խօսելով նորա մասին — «ոչ ինչ իւրեք յանդիմանութեամբ խօսել... ըստ կրօնիցն Ջաւինայ գնայր նա, ագանէր զամղայեալս, եւն — ցոյց է տալիս, որ Ասպուրակէս արդէն մեռած էր իւր գրած ժամանակ. (այլապէս՝ կ'ասէր. Ոչ իւրեք, ըստ կրօնիցն Ջաւինայ գնայ, ագանէ եւն): Արդ եթէ հեղինակի ժամանակագրութեան վերայ հիմնուինք՝ կը տեսնենք, որ նա չէր կարող իւր պատմութիւնը գրել յառաջ քան (384+3+2+Ասպուրակէսի տարիները) գոնէ 392 թուականը. իսկ եթէ հիմնուինք ուրիշ հեղինակների ժամանակագրական տեղեկութիւնների վերայ՝ այդ պատմութիւնը գրուած պիտի համարենք ամենից ուշը՝ 389 թուին, քանի որ այդ թուականի տեղեկութիւններ է նա պարունակում: Արդ 389ին փաւստոս եպիսկոպոսը կը լինէր առ նուազն իբր 100 տարեկան, իսկ 392ին՝ մօտ 103 տարեկան: Որչափ

էլ Ե. Մ.-ի հետ ընդունինք, որ «Բուզանդ գրեւ
է իր պատմութիւնը ծերութեան, գուցէ եւ խորին
ծերութեան հասակում»,՝ դարձեալ անկարելի ենք
համարում, որ 100 տարեկան ծերունին ընդունակ լի-
նի մի ընդարձակ պատմութիւն գրելու, լի բազմութիւ
անուններով ու մանրամասնութեամբ, աշխուժով
եւ երեւակայութեամբ: Դա ֆիզիկապէս անհնար է:

Այս խորհրդածութիւնները մեզ իրաւունք
են տալիս ասելու, որ Փ. պատմութեան հեղինակը
հոռոմ Փաւստոս եպիսկոպոսը չէ, որ մի քանի
անգամ յիշուում է պատմութեան մէջ, եւ թէ
սխալ է այն մեկնութիւնը, որ տալիս են «Ստորո-
տին» Ե. Մ. եւ Ա. Գարագաշեան:

2. — Փ. պատմութեան հեղինակին յոյն
համարողների երկրորդ հիմքը — Գ. դպրութեան
վերջաբանութիւնը — զուրկ է կարեւորութիւնից:
Այստեղ յիշուում է յիշաւի, որ Փաւստոս Բիւ-
զանդ «էր ժամանակագիր Յունաց», բայց սորա
հետ միասին ասուում է, թէ Փաւստոս Բիւզանդ
էր ժամանակագիր «Դժ գարաֆի»: Այս «Դժ
պատմագիրը» անվիճելի կերպով ապացուցանում
է, որ Գ. դպրութեան վերջաբանութիւնը յամե-
նայն դէպս չէ կարող Փաւստոս Բիւզանդի գրածը
լինել, որովհետեւ սա չէր կարող ինքն իրան կոչել
«մեծ պատմագիր»: Այս վերջաբանութիւնը կարող
է պատկանել որեւէ դրչի, որ գրքի «Փաւստոս
Բիւզանդ» վերնագրից մոլորուելով՝ հեղինակին
յոյն է համարել. այս դէպքում այդ վերջաբանու-
թիւնը կորցնում է մեր աչքում իւր նշանակու-
թիւնը՝ իբրեւ վկայութիւն հեղինակի ազգութեան
մասին: Բայց մենք աւելի հաւանական ենք հա-
մարում, որ այդ վերջաբանութիւնը նոյն իսկ հե-
ղինակի գրածն է, բայց ոչ յոյն Փաւստոս եպիս-
կոպոսի, այլ անծանօթ հայ հեղինակի, որ յայտնի
դիտումներով հարկ է համարել սքողել իւր ազ-
գութիւնը եւ գիրքը վերագրել յոյն Փաւստոսին:

3. — Գ. Հիմքը նոյնպէս զուրկ է կարեւորութիւնից: Պատմական տեղեկութիւնները խորենացուց տարբեր կերպով աւանդելը երբեք չէ կարող ապացոյց համարուել հեղինակի օտարազգիութեան, այլ միայն նորա անտեղեկութեան, մանաւանդ երբ այդ տարբեր աւանդուած պատմութիւնների մէջ չկայ դիտաւորութիւն ազգը նուստացնելու: Այս կէտի վերայ չ'արժէ երկար կանգ առնել: Պատմական այն անցքերում, որոնք տարբեր են աւանդուում փաւստոսից եւ խորենացուց՝ բանասիրութիւնը ներկայումս սխալուած է համարում խորենացուն, եւ ոչ ընդ հակառակն: Իսկ եթէ սխալուած համարէինք Փ. պատմութեան հեղինակին՝ ոչ թէ Հ. Զարբհանէլեանի նման պիտի եղբակացնէինք, թէ «ազգային պատմի մը համար անկարելի է այդպիսի անգիտութիւն», այլ աւելի մեծ իրաւունքով՝ թէ «Ժամակակից պատմի մը համար անկարելի է այդպիսի անգիտութիւն»:

4. — Գ. Հիմքի դէմ, այն է, որ հեղինակը «չափազանց ատելութեան ոգի մը ունի ընդդէմ Հայոց, որով միշտ առիթ կը փնտռէ մեր ազգը վար զարնելու» — արդէն բաւարար աւարկութիւններ արել են մեզանից առաջ: Ա. Գարագաշեան (Բ. 72) բազմաթիւ օրինակներ է բերում Փ. պատմութիւնից, ուր հեղինակն այնչափ «գրուատեօք կը խօսի ազգին հայրապետաց, թագաւորաց, զօրավարաց, նոյն իսկ երկրին կարգաց եւ յօրինուածութեան վերայ», ուրտի եւ «չի կրնայ թշնամի կոչուիլ՝ եթէ ուրեք ուրեք պատմէ ազգին թերութիւններն եւ մալրութիւններն եւս անաչառապէս»: Նոյն հեղինակն, ինչպէս նաեւ Հ. Գաթրժեան նորանից առաջ¹, իրաւամբ նկատում են, որ Փ. հեղինակից շատ աւելի պարսաւում է Հայոց՝ խորենացին, որի հայ ազգութիւնը սակայն չէ կա-

¹ «Հանդէս ամսօրեայոյ», վերոյիշեալ տեղում:

րելի ուրանալ այս պատճառով¹: — Մեր կողմից մի երկու նկատողութիւն աւելցնենք այստեղ այն կէտերի վերաբերութեամբ, որոնք գեւ պահում են իրանց նշանակութիւնը: — Փ. պատմութեան հեղինակը երբեք չէ գրում «շէարհ» Հայոց, [Թադաւորն Ռե, այլ «շէարհ» Հայոց, [աֆաւորն Հայոց. իսկ երբ Յունաց մասին է խօսում՝ ասում է Ռեթ [Թադաւորն Յունաց, Ռեթ Աթենացւոց քաղաք: Որ հեղինակը չէ գրում աշխարհ» Հայոց, [Թադաւորն Ռե՝ այդ ճիշտ է. բայց դա հեղինակի օտարազգիութեան նշան չէ, այլ ժամանակի մատենագրերու սովորութիւնը²: Կորինը անպայման հայ է եւ հայերէն է գրել. բայց նա եւ շարունակ գրում է. «Գիրս նշանագրոց Հայաստան ազգին» (Նոր տպ. եր. 16.) «Գառնայր յերկիրն Հայոց... աշխարհին Հայոց» (26). «Երեւելով աշխարհին Հայոց» (33). «Թադաւորն Հայոց, որոյ անուն կոչէր Վաւաշապուհ» (17). «Ի հինգերորդ ամի Վաւաշապուհոյ արքային Հայոց» (եւն): Նոյն երեւոյթը խիստ յաճախ նկատուում է եւ Ագաթանգեղոսի մօտ³: Գալով «Ռեթ [Թադաւորն Յունաց», «Ռեթ Աթենացւոց քաղաքին» խօսքերին՝ նկատենք, որ հայի համար էլ բնական է մեծ կոչել այն՝ որ արդարեւ մեծ է: Բայց զարմանալին այն է, որ Փ. պատմութեան հեղինակը մի մի անգամ միայն Ռեթ կոչելով Յունաց կայսրը եւ Աթէնքը՝ նոյն տիտղոսը աւելի յաճախ գործ է ածում Հայոց [Թադաւորներին եւ հայ քա-

¹ Փ. ի Հայաստեցութեան դէմ տես եւ Ե. Մ. եր. 4—5:

² Ն. Մառ. (Анонимъ, 298) նկատում է. «Այս անկարեւոր երեւոյթը (այսինքն Աշխարհ» Հայոց, Ռեթ [Թադաւորն Յունաց) պարզապէս նորանով է բացատրուում, որ Փաւստոս պատկանում է գեւ այն ժամանակին, երբ նորադարձ հայերին ասորի ուսուցիչները քրիստոնէական կրօնի հետ պատուաստում էին եւ այն քաղաքական աշխարհահայեացքը, որ տիրապետում էր եւ Ասորիքում, եւ ազգային ինքնաճանաչութիւնը գեւ չէր արժարժուել: Յամենայն դէպս նոյն երեւոյթը նկատում ենք եւ Անանուհի մօտ:

³ Տպագր. Թիֆլիսի, 1882, եր. 26, 29, 33..., 502, 505, 506, 507 եւն:

ղաքների համար. — (եւ այս հանգամանքը՝ տարօրինակ կերպով՝ չէ առել ի նկատ Հ. Զարբհանէյեան, որ այնքան մեծ կարեւորութիւն է տալիս՝ հեղինակի «մեծ» կոչելուն Յունաց կայսրը եւ Աթէնքը): Այսպէս մենք գտնում ենք. «Մեծի թագաւորին խորովում». (Գ. Ը.) «Թագաւորն մեծ Արշակ», (Գ, ԺԱ.) «Մեծ արքայն Տիգրան», (Գ, ԺԵ.) «Զմեծ թագաւորն Հայոց Ղապ», (Ե, ԼԲ.) նոյնպէս եւ՝ «Արշակունեաց քաջարանց», (Գ, ԺԱ.) «Քաջարանց խորով թագաւորն Հայոց մեծաց», (Գ, ԺԱ.) «Զմեծ քաղաքն Երուսաղէմ», (Գ, ԾԵ.) «Քաղաքին մեծի Երուսաղէմ», (Գ, Ը.) «Ի քաղաքն մեծ յԱրտաշատ», (Գ, ԺԲ., Գ, ԾԵ.) եւն: Աւելացնենք եւ այն, որ հեղինակը մեծ է կոչում նոյն իսկ Մաղքթաց թագաւորին — «Սանէսանայ մեծի թագաւորին», (Գ, Է.) Հայոց թագաւորներին այս տիտղոսները չէր կարող տալ ոչ մի յոյն, եւ ոչ էլ անաչառ կամ անտարբեր հայր, այլ թունդ ազգասէր, ազգամոլ հայր միայն, որովհետեւ հայ թագաւորները Գ. դարի երկրորդ կէտում անզօր թոյլ իշխաններ էին, Յունաց եւ Պարսից քաղաքականութեան խաղալիկ, նոցա ձեռքով ու համաձայնութեամբ թագաւորած, նոցա ձեռքով դահից իջեցրած: Նրանց Տէժ կոչելը ուրեմն պատմական ոխալ է, որ կարող է բացատրուիլ միայն հեղինակի չափազանց ազգասիրութեամբ: — Մենք յետոյ ուրիշ հանգամանքներ մէջ կը բերենք, որոնք շօշափելի կերպով ցոյց կը տան հեղինակի հոգով, սրտով, զգացմունքներով ամենազուտ հայ եւ հայասէր լինելը, որով միանգամայն կը հերքուի կարծիքը հեղինակի հայատեցութեան մասին, որ մի խոշոր թիւրիմացութիւն է:

5. — Ե. հիմքը, որով բանասէրները կամենում են ապացուցանել, թէ պատմութեան հեղինակը ակնհայտեա կամ ժամանակակից է եղել իւր պատմած դէպքերին (ուրեմն եւ պէտք է լինի Գ. դա-

բում ապրող հոռում փառտոս եպիսկոպոսը՝ պատմութեան մէջ նկատուած մանրամասնութիւններն են, որոնք այնպէս մանր եւ սիրով նկարագրուած են: Ա. Գարագաշեան (Գ., 179) իբրեւ այսպիսի, ականատեսի նկարագրութիւն՝ մատնացոյց է լինում Մերութանի սպանութեան գլխի վերայ. (Ե. ԽԳ.) իսկ Ե. Մ. (51)՝ Ս. Ներսիսի կեանքի վերջին ժամերի նկարագրութեան վերայ. (Ե. ԻԴ.) Լարող ենք մեր կողմից աւելացնել, որ այդպիսի մանրամասն կենդանի նկարագրութիւններ ուրիշ շատ տեղ կան Փ. պատմութեան մէջ, եւ սոքա, ինչպէս նաեւ բաղմնութիւ յատուկ անունները, յիշուի կարող էին մեզ համոզել, որ հեղինակը ականատես, գոնէ ժամանակակից է իւր պատմածներին՝ եթէ չունենայինք հաստատ ապացոյցներ՝ թէ կարելի է նոյնպիսի նկարագրութիւններ անել առանց ականատես կամ ժամանակակից լինելու: Ահա մի քանի օրինակ մեր մատենագրութիւնից. — «Խոյս ետ Հայկն յերեսաց նորա, եւ գնայր նա փախստական... եւ ընդ պղնձի վահանն ի թափ անցուցանէ ընդ մսեղէն արձանն, յերկիր խորխեալ վտարեալ նետն»¹ — «Ջոր տեսեալ թագաւորին Բասլաց՝ մօտ հասանէ յարքայն... եւ զոյդ ընդ պարանոցին զգլուխ երիվարին»² — «Հեծաւ արի արքայն Արտաշէս... արագ հասուցանելով ի բանակն իւր»³ — «Ջայս, եւ որ այլ այսպիսիք բազումք, եբեր մերոյ աշխարհիս... եւ ի խրախճանութիւնս օրինաւոր»⁴ — «Եւսեծաւ զՔուռկիկ-Չալալին, գլխս եզի գլխու գետին... Նայինք՝ խրօղէր ինչ տ'ասի»⁵ — «Մէկ մեծ,

¹ Ա. դպր. Սերէոսի - Անանունի պատմութիւն, հրար. Պատկ. եր. 3—4:

² Խորենացի, Բ, 2Ե:

³ Անդ, Բ, Ծ.:

⁴ Անդ, Ա, ԻԴ.:

⁵ Դաւիթ եւ Մհեր (հրար. Մ. Արեղեանի), Շուշի, 1889, եր. 23:

փիր, ախտիար խալւոր ըմ կէր մէջքեր. . . խալւոր
ասաց. Էնա ճուշ կանաչ շադբը,¹ Նոյն Փ. Պատ-
մութեան հեղինակը նոյնպիսի մանրամասն, կեն-
դանի նկարագրութիւններ է անուամ այնպիսի դի-
պուածների, որոնք երբեք իրապէս չեն կատարուել,
այլ առասպել են, որոնց ուրեմն չէր կարող հե-
ղինակը ժամանակակից եւ ականատես լինել:
(Համեմատել Դ, ԽԵ, Պապի զաղրագործութիւն-
ներն ու տեսարանը Պապի եւ Փառանձեմի մէջ: —
Դ, ԾԴ. եւ Ե, Է. — Արշակի ձերբակալութիւնը եւ
մահը. տեսարանները Արշակի եւ Շապուհի, Արշակի
եւ Դրաստամատի մէջ: Վերջին տեսարանը եթէ ոչ
առասպել՝ գոնէ անմատչելի էր հեղինակին): Վեր-
ջապէս հէքեաթների մէջ հարիւրաւոր տեղերում
պատահում են այսպիսի մանրամասնութիւններ եւ
բնական նկարագիրներ. բայց ոչ ոք դորանից չէ
հետեւցնում, թէ հէքեաթների ստեղծողները
ժամանակակից կամ ականատես են եղել այն դու-
րերին, որոնք երբեք գոյութիւն չեն ունեցել
իրականապէս: Մանրամասնութիւնների, բնական
նկարագիրների աղբիւրը գտնուում է հեղինակի
երեւակայութեան մէջ. երբ հեղինակի մէջ զար-
գացած է այս բնդունակութիւնը՝ նա, առանց
կարօտելու աչքի կամ ականջի թելադրութեան,
ստեղծում է կենդանի պատկերներ, որոնց զար-
դարում է այնպիսի մանրամասնութիւններով ու
հանգամանքներով, որ նա ձեռք է բերել՝ դիտե-
լով կեանքի երեւոյթները: Մեր խօսքին ապացոյց
են բազմաթիւ գեղարուեստական գրուածքները
բոլոր ազգերի մատենագրութիւնների մէջ: Փ.
պատմութեան հեղինակը այսպիսի բանաստեղծ,
վառ երեւակայութեան տէր պատմագիր է. մա-
նաւանդ բանաստեղծական են նորա աղբիւրները
— ժողովրդական վէպերն եւ աւանդութիւնները:

Այս հանգամանքով են բացատրուում նորա պատմութեան մէջ ոչ միայն մանրամասնութիւններն ու կենդանի նկարագրութիւնները, այլ եւ օտարոտի չափազանցութիւնները, բազմութիւ հրաշքները եւն։¹

Փ.ի պատմութիւնը Դ. դարի զործ համարող բանասէրների մի փաստն էլ այն է, որ այս պատմութիւնը հասնում է մինչեւ Արշակունեաց թագաւորութեան բաժանումը (384-ին, ըստ այժմեան հաւանական ենթադրութեան), որ հեղինակը մեռած պէտք է լինի այս բաժանումից քիչ յետոյ, որովհետեւ չգիտէ խոսրովի եւ Արշակի մէջ ծագած պատերազմը, ոչ Արշակի մահը եւ ոչ նորա թագաւորութեան վերջնալը։ Սակայն այս տրամաբանութիւնը ուղեղ չէ։ Խորենացին էլ իւր պատմութիւնը վերջացնում է Արշակունեաց թագաւորութեան բարձումով եւ Ս. Սահակի ու Մեսրոպի մահով. Ղ. Փարպեցին էլ իւր պատմութիւնը վերջացնում է Վահանի մարդպան ընտրուելովը. բայց այս հանգամանքներից չենք հղրակացնում, թէ Խորենացին մեռել է Ս. Սահակից ու Մեսրոպից քիչ յետոյ՝ որովհետեւ չէ գրել Վարդանանց նահատակութիւնը, կամ Փարպեցին մեռել է Վահանի մարդպան նշանակուելուց անմիջապէս յետոյ, որովհետեւ չէ յիշում նորա զործերը մարդպանութեան ժամանակ։ Այս երեւոյթը ուրիշ՝ բնական բացատրութիւն ունի. հեղինակը նախապէս որոշում է իւր գրելիք պատմութեան սահմանը, եւ իբրեւ վերջին կէտ իւր պատմու-

1 Մէջ բերենք այստեղ Հ. Այանեանի այս բնորոշ առդերը Փ.ի պատմութեան մասին. — «Ասոր (Փ. Բիւզանդացւոյն) ոսկեղէն յեղուն՝ գրողին բանաստեղծական անզուսպ ցնորիցը թափուին ամէն գրաւոր օրինաց կապանքէն ապստամբ կ'ելլէ... շատ անգամ կարծես թէ քանի մը տող միահեռ՝ հին Գողթան երգերուն շարունակութիւնն է աչքիդ տակ՝ փափուկ եւ ոգեւից կրկնութիւններով» քնն. քերականութ. հր. 58։

Թեան՝ ընտրում է մի նշանաւոր, գարագաւիկ
կազմող (epochemachend) դիպուած, որից յետոյ
պատահածները նորա ծրագրի մէջ չեն մտնում:
Այսպիսի նշանաւոր դիպուած է Խորենացու հա-
մար՝ Հայաստանի քաղաքական իշխանութեան
բարձունքն եւ ազգի երկու լուսաւորիչների մահը,
որի հետ եւ հայրապետութեան գաղարելը Ս.
Գրիգորի տոհմից, — դիպուածներ՝ որ նա այնպէս
սրտառուչողութեամբ էր ընկալեց Գ. Փարպեցու համար՝ Վահանի
մարդկայնութիւնը, որով փակուում է յիսնամեայ
կրօնական պատերազմների վերջին երեւոյթ — քրիս-
տոնէութեան յաղթանակով: Այսպիսի կէտ է եւ
Փ. ի հեղինակի համար՝ Արշակունեաց թագաւորու-
թեան բաժանումը, երբ «բազում գաւառք յիւ-
կոցունցն հատան, նուազեաց, բաժանեցաւ, ցրուե-
ցաւ թագաւորութիւնն Հայոց, պակասեաց յիւրմէ
մեծութենէն» (Ձ, ա) Հեղինակի համար՝ այս
բաժանումը վերջ էր Հայոց պատմութեան: Հէնց
գրքի սկզբումն էլ հեղինակը որոշում է իւր պատ-
մութեան սահմանները. — «Ժամանակագիր ա-
րարեալ ի թագաւորութենէն Խոսրովու որդւոյ
Տրդատայ Ռնէ — ի Ռնէ վերջն ժամանակն Վաղարշայ
թագաւորացն Հայոց, եւ ի քահանայապետու-
թենէն վրթանայ... Ռնէ — ցայնս ի վերջնս՝
որը կային գլխաւորք եպիսկոպոսք Հայոց» (Խոս-
տաբանութիւն) Հեղինակի գործածած լեզուից
— «ի Ռնէ վերջն ժամանակն», «ցայնս ի վեր-
ջնս», որը ինքն գլխաւորք, — եւ այն հանգա-
մանքից, որ նա իւր պատմելիքները կոչում է
«կարգ աշխարհ իրաց», երեւում է, որ նա ժամա-
նակակից չէ եղել իւր պատմածներին, այլ սոքա
անցեալի յիշատակարաններ են: Այս բանը մա-
նաւանդ բացայայտ է երեւում Ձ. ա. վերջին
բաւերից. — «նուազեաց, բաժանեցաւ, ցրուե-
ցաւ թագաւորութիւնն Հայոց, պակասեաց յիւրմէ
մեծութենէն յայն ժամանակն եւ յայն» Եթէ

հեղինակը ժամանակակից լինէր՝ նա կ'տուէր. «յայժմ ժամանակի», կամ «ի ժամանակս մեր», իսկ «յայն ժամանակն եւ յայն», խօսքը կարող էր գործածել միայն այն մարդը, որ տեսած էր Արշակունեաց թագաւորութեան իսպառ բարձումը, որովհետեւ այդ խօսքը նշանակում է, թէ Արշակունեաց թագաւորութիւնը այնպէս, միւլէ-վերջէ ընդ միշտ կորցրեց իւր մեծութիւնը:

Արքայպէս Փ ի պատմութիւնը յոյն հեղինակի գործ համարող բանասէրները բերում են մի փաստ եւս, այն է, որ այդ պատմութիւնը գրուած է եղել յունարէն լեզուով (Ե. Մ., 21.) եւ թարգմանուած է հայերէն թարգմանիչներից մէկի ձեռքով. (Գարագաշեան Բ, 74.) Այդ բանասէրները սակայն ոչ թէ պատմութեան բնագրում գտնում են փաստեր, որոնք ապացուցանէին յունարէն սկզբնագրի գոյութիւնը, այլ սկզբնագրի յունարէն գրուած լինելը եղբակցւում էն այն հանդամանքից, որ պատմութեան հեղինակ են համարում յոյն փաւստոս եպիսկոպոսին, եւ պատմութիւնը գրուած՝ Գ. դարի վերջերին, երբ հայերէն գրելու հնարաւորութիւն չկար: Այսպէս է տրամաբանում Ե. Մ. (եր. 13 եւ յռջ.). երեւի նոյն հիմքն ունի եւ Ա. Գարագաշեան, որ պնդում է, թէ «թէ Բուզանդ է թարգմանութիւն, եւ թարգմանութիւն միայն թարգմանչաց՝ յայտնի է եւ առանց հակառակութեան» (Բ, 74). գտնէ նա նոր փաստեր մէջ չէ բերում՝ ապացուցանելու համար իւր այս անպայման վճիռը, որ ըստ մեզ շատ հեռու է յայտնի եւ առանց հակառակութեան լինելուց: Տրամաբանութեան յիշեալ եզանակն ինքն ըստ ինքեան ճիշտ է, բայց եզրակացութիւնը անընդունելի է. որովհետեւ, ինչպէս տեսանք՝ կասկածելի եւ սխալ են այն հիմքերը, որոնցից բխում է այդ եզրակացութիւնը: Յիրաւի, երբ մենք համոզուում ենք, որ այդ պատմութեան

հեղինակը յոյն Փաւստոս եպիսկոպոսը չէ, որ հաստատ ապացոյց չկայ այդ պատմութիւնը Դ. դարում գրուած համարելու՝ այլ եւս ոչ մի հիմք չի մնայ՝ նորա յիշատակը յունարէն լեզուով գրուած ենթադրելու թէպէտ եւ Ե. Մ. փորձում է բուն բնագրից մի քանի օրինակ բերել յունաբանութեան եւ յունարէն բառերի՝ բայց նոյն ինքն էլ խոստովանում է, որ «այդ յունաբանութիւնները շատ սովորական են մեր հին գրականութեան մէջ» (եր. 21), որ «յիշեալ յունարէն բառերից շատերը գործ են ածել եւ մեր հին մատենագիրները» (անդ). նա խոստովանում է, որ «Բուզանդարանը համարեա թէ չէ ներկայացնում խորթ օտարաբանութեան օրինակներ, եւ որ նրա լեզուն աւելի բնական է՝ քան Ե. դարու մեր նոյն իսկ ինքնուրոյն հեղինակութիւնները» (անդ). նա մինչեւ իսկ նկատում է, թէ «Փաւստոսի պատմութիւնը գրած է այնքան կենդանի հայախօսութեամբ, այնքան աշխարհիկ ոճեր ու դարձուածներ է պարունակում նա, — որ առաջին հայեացքից դժուար է այդ երկասիրութիւնը թարգմանական համարել» (եր. 12): Ե. Մ. աւելի նշանակութիւն է տալիս Հերակլ անուան երկու անգամ գործածուելուն՝ Վահագն անուան փոխանակ, եւ Սատրապ բառի յաճախակի գործածութեան՝ նախարար բառի տեղ: Բայց Հերակլ անուան գործածութիւնը դիւրաւ բացատրուում է նորա նով, որ գրագէտ Հայոց մէջ անխոր գործածական էին Վահագն եւ Հերակլ, որոնց առասպելներն ու պաշտամունքը շատ նման լինելով՝ նոյնացել էին Հայոց համար:՝ Իսկ սատրապի՝ գործա-

¹ Տես խորեն. Ա. ԼԱ. Բ. ԺԲ: — Նաեւ Ագաթանգեղոսի յոյն թարգմանիչը Հերակլ է թարգմանել հայ բնագրի Վահագնը, երկու գիրք նոյն համարելով:

² Պատկանեալի հրատարակութեան հիմք կազմող ձեռագիրը միշտ ունի «սատրապետը» եւ ոչ «սատրապը»: Տես Փաւստոս, Ս. Պետերբուրգ, եր. 57, ծանօթ:

ծուծիւնը բացատրուում է հեղինակի ճոխաբան ոճով եւ նախնեաց լեզուի պէսպիսութեան օրէնքով. հեղինակը միեւնոյն նախարարը արտայայտելու համար անխտիր գործ է ածում — նահապետ, տանուտէր, իշխան, շահապ, տէր, պետ, աւագանի, մեծամեծք, նախարարք. ի՞նչ զարմանք՝ եթէ երբեմն գործածէ եւ ստարապ բառը, որ հայերէնում վաղուց գործածական պէտք է լինէր, քանի որ զեռ նախնեաց լեզուում ունինք նորա հայացած ձեւն էլ — շահապ:

Եթէ օտարազգի բառերի գործածութիւնը մի գրուածքում նշան համարուէր օտարալեզու բնագրի՝ մենք յունարէն բնագիր պիտի ենթադրէինք նաեւ Կորինի, Խորենացու եւ Փարպեցու համար, պարսկերէն բնագիր՝ Եղիշէի, նոյն իսկ Փաւստոսի համար: Կորինի փոքրիկ գրուածքը, օրինակ, տառնեակներով յունարէն բառեր է գործածում, սրոնցից շատերը առաջին անգամ նորա մէջ են պատահում. — աղփաբետ, սիւղոբայ, կղերական, հռետորաբան, հեթանոս, բարբարոս, սիւն-հողոսական, մարտիրոս, քարտէզ, կանթեղ, սակեր եւն, բաց ի սովորական պատեք, աւգոստական, կաթողիկոս եւ այլ բառերից: Խորենացու եւ Փարպեցու մէջ հարիւրներով են պատահում յունարէն բառեր, հարիւրաւոր են պարսկերէն բառերը եւ աստցուածքները Եղիշէի եւ Փաւստոսի մէջ: Բայց Փ.ի պատմութեան լեզուն այնքան բնական, կենդանի է, այնքան ձեւերն ու դարձուածքները բուն հայկական, որոնցից շատերը մինչեւ հիմայ էլ ժողովրդական լեզուում ապրում են¹, այնքան ոճը ընտանի է մեզ իւր ճոխութեամբ, կրկնութիւններով, պատկերաբար աստցուածքներով, որ անկարելի է նրան թարգմանութիւն համարել որեւէ լեզուից: Եւ յիշուի, չնայելով որ Փ.ի լեզուն այն-

¹ Բաղմաթիւ օրինակները տես Քննական քերականութիւն, Ներածութիւն, եր. 63—118:

քան առատաբան, մինչեւ իսկ աւելորդաբան է, չնայելով որ շատ անգամ անտես է անում լեզուի քերականութիւնը, որ նախադասութիւնների մէջ կապը չէ պահպանում՝ այնու ամենայնիւ նա մեղաւելի հասկանալի է, քան բոլոր Ե. դարի գրուածքները, սոցա մէջ հաշուելով նոյն իսկ Փարպեցուն։ Այս դադտնիքը բացատրուում է միայն սորանով, որ նա գրուած է բուն հայկական լեզուով ու ոճով, որի ոգին մեղ հարազատ է, մեր ըմբռնողութեան դիւրամտօղելի։ Մեր բոլոր մատենագրութեան մէջ չենք յիշում մի ուրիշ գրուածք, որ Փաւստոսի չափ կենդանի եւ ընտանի լեզու ունենայ, որի մէջ հեղինակի ոգին լեզուի եւ չափաւորութեան որեւէ սանձ կտրելով՝ յորդաբուզիւ դուրս թափուի, եւ իւր կրկնութիւններով, բառերի կուտակութիւններով եւ անկանոնութիւններով մեղ ոչ թէ ձանձրացնէ ու զզուեցնէ, այլ ընդհակառակն՝ ոգեւորէ եւ սիրահարեցնէ իրան։ Ի՞նչ օտարազգի բնագիր պէտք է լինի՝ որ այսպիսի յորդահեղեղ, ոգելից թարգմանութիւններ տայ. — “Այսպէս պաշարեալք, բնկապճեալք, գերեալք, վանեալք, կրճկեալք, ամենեքեան առ հասարակ յերկիր անկեալք անբարբառ կային, անխաղացք ի տեղւոջն, որք էին տոհմք եւ ազգք աշխարհակերք, աշխարհաւերք, ժանդագործք քրմացն.” (Գ. Գ. 1) — “Եթէ զքայլք եւ զքերեկ նստեալ վարդապետացն եւ ըստ նմանութեան ամպոցն իբրեւ զյորդահեղեղ ինչ անձրեւաց սաստկութիւն զվարդապետութիւնն ի վերայ հոսէին՝ ոչ ոք ի նոցանէն եւ ոչ մի ոչ, եւ ոչ մի բան, եւ ոչ կէս բանի, եւ ոչ դոյզն յիշատակ ինչ, եւ ոչ նշմարանս ինչ զոր լսէինն՝ եւ ոչ կարէին ինչ ունել ի մտի.” (Գ. Ժգ. 1) — “Եւ այլ ոչ ոք էր, որ զառաջնորդութիւն զլիաւորութեան քահանայապետութեանն վերակացութեանն ոք տէրունական տանն հրամանատարութեանն կոտարեալ՝ պաշտամանն յաջորդէր.” (Գ. Ժգ. 1) — “Եւ

յաւուրս ձմերայնոյն, յորժամ կուտեալ զիզեալ
զմեծութիւն բազմութիւն թանձրութեան ձեանցն
կուտակեալ հիւսեալ ձեանցն ի վերայ ձմերային
լերանցն, յայնպիսի լերանց ի վերայ ընդ այնպիսի
ժամանակի կամեր ուրեք երթալ ի պէտս ճանա-
պարհի.» (Գ. ԺԳ.) — «Ի խնդիր անկանէր, զնոյն
գոյն ձի, զնոյն նշան, զնոյն պատկեր, բայց ի մեծու-
թենէ, զի այնչափ սւրեք ոչ գտանէր, զնոյն նման
զնոյն կերպարանս ճարտուկ ճանձկէն գտեալ, եւ
հանդերձ հրովարտակօջ եւ պատարագօջ ի ձեռն
մոլեկան Փիտակայն առ իշխանն յԱտրպատական
առ Վարազն արձակէր.» (Գ. Ի.) — «Եւ այն բանքն,
որ վասն որոյն ի թագաւորէն ասացաւ՝ վաղվա-
ղակի յունկն զօրավարին Պարսից հասանէին ի բե-
րանոյ շորիկն, շոգմագն, տիրանենկն եւ տիրա-
գրուժն, տիրասպանուն, տիրամատնիչն Փիտակայ,
յայն յաշխարհակորոյս յառնէ անտի... այլ իշ-
խանն Պարսից զթշնամութիւնն զոր ունէր ի ներ-
քոյ՝ խորամանկեալ, ծածկեալ, մեքենայեալ, ա-
ռադաստեալ բերէր, եւ առնէր սպաս զգաւն կա-
տարել.» (Գ. Ի.) Օրինակներն յաճախելլ աւելորդ
է. — ամբողջ Փաւստոսը լի է այսպիսի տեղերով,
որոնք իրանք իրանց խօսում են, թէ արտահոսում
են «նօթալէ» հեղինակի, եւ այն էլ հայ հեղինակի
որտից, որի խառն զգացմունքները, անզուսպ եւ
բեւեակայութիւնը ուղիւօրէն դուրս են թափում
բառերի կուտակութիւններ, ստեղծելով բնորոշ
ոճ: Այստեղ չէ նկատուում սառն դատողութիւն,
չափուած մտածուած խօսքի ձեւ, որ պէտք է լինէր
այն դէպքում՝ եթէ հեղինակն աչքի առաջ ու-
նենար իւր լեզուի ազատութիւնը կաշկանդող յու-
նական բնագիր: Դժուար է ենթադրել, որ կարծե-
ցեալ յոյն բնագրի հեղինակը եւ նորա հայ թարգ-
մանիչը երկուքն էլ դիտմամբ կամ պատահաբար
անկանոն նախադասութիւններ եւ տարապայման
կրկնութիւններ գործածէին. իսկ եթէ նոյանից

մէկը կանոնաւոր ոճ ունենար՝ փաւստոսի պատմութիւնը այժմեան լեզուական կերպարանքը չէր ունենայ։ Սխալ կարծիք է՝ թէ թարգմանիչը դիտմամբ բանեցրել է այս լեզուն, գիրքը ժողովրդին գիւրմբուռներէ դարձնելու համար։ Այսպիսի մի խօսք — «քանզի «տէր-նի-ն էր Հայոց խաչատուրէն Բաղմիւն անդէն ընդ նմն աւ նմ է նորին որդի-որդն արիւնել Բաղմիւն, օրէնք էին, զի թագաւորն Պարսից եւ թագաւորն Հայոց ի միում տախտի բաղմէին, ի միւս Բաղմիւն» (Դ. ԺԴ.) — անշուշտ աւելի գիւրմբուռների կը լինէր՝ եթէ նոտրգիր տողերը ամենեւին չլինէին. նոյնպէս վերը բերուած օրինակներից շատերը համառօտուելով՝ միայն կը վաւասակէին պարզութեան կողմից — քնական քերականութեան հեղինակը, որ համառօտ խօսքերով այնքան հմտութեամբ անդամազննել է Փ. լեզուն՝ այսպէս է եզրափակում իւր հայեացքը նորա մասին. «Ամենայն ինչ բնական է (փաւստոսի լեզուի մէջ), առանց արուեստի եւ արուեստականութեան, եւ հարկ է ըսել՝ հոն լի բնութիւն է խօսողը։ Աերջապէս լեզուաւոր խորին հայկաբան, քերականական տրամաբանութեամբ ճշդիւ ռամիկ, ոճովն ամենեւին արեւելեան»¹, «օտարազգի ոճէ ազատ է»² — Եթէ Փ.ի պատմութեան լեզուից առ հասարակ պէտք լինի եզրակացութիւն անել նորա հեղինակի ազգութեան եւ սկզբնազրի լեզուի մասին՝ մեր խորին համոզմամբ կարելի է միայն այս եզրակացնել, որ նորա հեղինակն հայ է մինչեւ իւր ուղղն ու ծուծը, եւ իւր ամբողջ հայութեան ոգին թափել ցոլացրել է լեզուի մէջ, որ «նմիւս-պէս բղխում է հայ սրտից եւ հայ ուղեղից։ Փ.ի պատմութիւնը, լեզուի եւ ոճի տեսակէտից, թարգմանութիւն համարելը — չենք ասում թիւրիմացութիւն, այլ ուղղակի մեղք է։

¹ Ներածութիւն, եր. 59։

² ԱճԴ, 124, Ծանօթ.։

Փաւստոսի պատմութեան հեղինակի եւ սկզբնական լեզուի մասին մի նոր հայեացք է յայտնում Հ. Բ. Սարգիսեանը,¹ այն է, որ “նորա հեղինակը պէտք է որ Դ. դարուն վերջերը ապրող հայ մի եղած լինի, եւ իւր գործը՝ ոչ թէ հայերէն, այլ յունարէն լեզուով շարագրած է, որուն մէջ ապա Ե. դարում, կամ թարգմանութեան եւ կամ մի ուրիշ առթիւ, անծանօթ գրչէ մը այլեւայլ եկամուտ հատուածներ ներմուծուած են”։ Հեղինակի հայ լինելը բանասէր Հայրը հետեւեցնում է սորանից, որ “Սոկրատ, Սոքրմէն եւ Պրոկոպիոս իբրեւ հայ հեղինակութիւն կը յիշեն այդ երկուսի թիւերը, իսկ յունարէն լեզուով գրուած լինելը հետեւեցնում է սորանից, որ եթէ յունարէն գրուած չլինէր՝ “վերոյիշեալ հեղինակներն ոչ կարգաւ պիտի կարենային զայն եւ ոչ այլ անտի հատուածս մէջ բերել. եւ սակայն Պրոկոպիոս ըստ յունարէն բնագրին մէջ բերած է բոլոր Արշակայ պատմութիւնն, եւ ոչ թէ ըստ բերանացի աւանդութեան կամ ըստ հայերէն գրութեան”։ Որ Փ. պատմութեան հեղինակը հայ է՝ դա մեզ համար անտարակուսելի է. բայց Հ. Սարգիսեանի պատճառաբանութիւնը մեզ անհաւանական է թուում։ Փաւստոս օտարագրի անունը շատ բանասէրների վերայ այնքան ազդել է, որ նոքա այդ զուտ հայկական գրուածքը յոյն հեղինակի են վերագրել. արդ կարելի՞ բան է, որ յոյն պատմագիրները յունարէն գրուած պատմութեան վերայ այդ միեւնոյն յոյն լատին փաւստոս անունը տեսնելով՝ նրան հայ համարէին։ Այդ հեղինակների գործածած “Հայոց պատմութիւն” բառը կարող է վերաբերուել իրանց աղբիւրի բովանդակութեան, գուցէ եւ լեզուին, բայց ոչ Փաւստոս անունը կրող հե-

¹ Աղթանգեղոս եւ իւր բազմագարեան գաղտնիքն՝ եր. 298—299։

ղինակի հայազգութեան: Նոյնպէս հիմնաւոր չէ
թուում մեզ Փ.ի պատմութեան յունարէն սկզբնա-
գրի փաստաբանութիւնը: Ենթադրելու համար, որ
Պրոկոպիոս Փ.ի պատմութեան յունարէն բնագրից
է աւել իւր պատմածն Արշակ Բ.ի մասին՝ պէտք
էր ապացուցանել, որ գոյութիւն ունեցել է այդ-
պիսի յունարէն բնագիր, կամ գոնէ մանրամասն
բաղդատութեամբ ցոյց տալ, որ հայերէն Փաւս-
տոսը չէր կարող աղբիւր լինել Պրոկոպիոսին, իսկ
քանի որ սոցանից ոչ մէկը եւ ոչ միւսը չէ ապա-
ցուցուած՝ աւելի հաւանական եւ բնական է կար-
ծել, որ կամ Պրոկոպիոս ինքը հայերէն կարդա-
ցած է Փ. պատմութիւնը — քանի որ հայազէտ
յոյն ուսումնականներ պակաս չեն եղել. մանաւանդ
որ Պրոկոպիոս ծննդեամբ կեսորացի լինելով՝
դիւրաւ կարող էր յարաբերութիւն ունենալ Հայոց
հետ, — կամ ուրիշը նորա համար թարգմանել է
Փաւստոսից հատուածներ: Ասկրատի եւ Սոզոմէնի
մասին չենք խօսում: Դեռ պէտք է ապացուցանել,
որ նոքա Փ.ի պատմութիւնից օգտուել են, այնու-
հետեւ միայն կարող է խնդիր լինել, թէ ինչ լեզուով
է եղել նոցա ձեռքի տակ եղած Փաւստոսի բնագիրը:
Նորայր Բիւզանդացու կարծիքի վերայ — որ
Փ.ի մէջ նկատելով մի կողմից խիստ անպարկեշտ
տեսարաններ եւ միւս կողմից ծայրայեղ բարեպաշ-
տութիւն, երկու հեղինակ է ենթադրում այդ
պատմութեան, մէկը լիտիաբան յոյն աշխարհական,
միւսը բարեպաշտ ասորի եկեղեցական¹, — երկար
կանգ առնել հարկ չենք համարում: Այդ երկու,
ըստ երեւութին անմիաբանելի յատկութիւնները
դիւրաւ կարող են միանալ մի պարզամիտ, դիւրա-
հաւան «բնութեան որդու» մէջ, որպիսի տիպեր
շատ բազմութիւն են մեր գիւղական դասի մէջ, որոնք
ամէն մի անպարկեշտ բան իւր անունովն են ասում

¹ «Բնասեր» 1887, Ա. եր. 28—29 եւ յաջ.

նայն իսկ կանանց եւ երեխաների ներկայութեամբ, եւ այնքան պարզամիտ են, որ չեն էլ կարող երեւակայել, թէ կայ խօսքի վայելչութեան չափ, կամ իրանց ասածը կարող է վիրաւորել մէկի ողջախոհութիւնը: Փ.ի պատմութեան հեղինակն էլ այս տիպերիցն է, որ շատ լաւ նկատուում է անպարկեշտ տեսարանների նկարագրութեան ոգուց: Նա ոչ թէ ցոփաբան է, ոչ թէ հեշտասիրական երեւակայութիւնից է մղուում անպարկեշտ դէպքեր պատմելու, այլ հէնց բարեպաշտական զգացմունքից դրդուած պարսաւում է այդպիսի գործերը: Նորա գրածը ընթերցողի մէջ չէ շարժում ուրիշ որեւէ զգացմունք՝ քան հիացում այդ անմեղ, պարզամիտ հոգու վերայ, որ «ոչ գիտէ զինչ գործէ»:

Մենք հարկ համարեցինք այս համառօտ տեսութիւնը նուիրել՝ Փ. պատմութեան լեզուի, գրութեան ժամանակի եւ հեղինակի ազգութեան մասին եղած դանաղան կարծիքներին, քանի որ դոքաամբողջական քննութեան չէին ենթարկուած եւ ներկայացնում էին ըստ երեւութին բաւական ծանրակշիւ, միմեանց հետ սերտ կապակցուած հիմքեր՝ այդ պատմութիւնը Դ. դարի յայն հեղինակութիւն համարելու: Մենք ջանացինք ցոյց տալ, որ այդ հիմքերը խախտւած են, — որ բաւական փաստեր չկան այդ պատմութիւնը Դ. դարում գրուած համարելու, որ նորա հեղինակը՝ գրքում յիշուած փառաբան հոռոմ եպիսկոպոսը չէ, որ նա չէ գրուած յունարէն կամ ուրիշ օտար լեզուով: Այժմ կը դառնանք այս ուսումնասիրութեան երկրորդ մասին եւ կ'աշխատինք ապացուցանել, որ այդ պատմութիւնը գրուած է Ե. դարի կիսին, հայի ձեռքով եւ հայերէն լեզուով, այսինքն յընդհանուրն այն՝ ինչ որ համառօտիւ ծրագրել է Հ. Գաթրժեանը մեր արդէն յիշած հատակոտորում¹:

¹ «Հանդէս ամսօրեայ», 1889, մարտ:

Բ.

Փառաստանի յամաքաղութիւնները Ե. դարի հայերէն գրութեանց — Ակնարկութիւններ Ե. դարի անցքերի վրայ. — Անտնդեկութիւն ժամանակագրութեան. — Հրաշքներ, առանդութիւններ, վիպական տարր. — Հեղինակի ազգային ոգին. — Եզրակացութիւն:

Եթէ մի կողմ դնենք վերայիշեալ կարծիքները, որոնք հիմնուած են Փ.ի պատմութեան մի քանի կասկածելի եւ առեղծուածային տողերի սխալ բացատրութեան վերայ, եւ առանց նախառեալ կարծիքի քննենք այդ պատմութեան բովանդակութիւնը՝ բաւականաչափ ուղղակի եւ անուղղակի այնպիսի ցուցումներ կը գտնենք նորա մէջ, որոնք մեզ ուրիշ եզրակացութեան կը հառցընեն այդ պատմութեան գրութեան ժամանակի, հեղինակի ազգութեան եւ սկզբնագրի լեզուի վերաբերութեամբ:

Անծանօթ հեղինակը խոստաբանութեան մէջ յայտարարելով, որ պէտք է սկսէ խորով կատակից եւ վրթանէս կաթողիկոսից. Գ. ա. գլխում բացատրում է, թէ ինչո՞ւ է սկսում այդ պատմական կէտից. — որովհետեւ, ասում է, «Սանատրուկից եւ Թադէոս առաքեալից մինչեւ Տրդատի եւ Ս. Գրիգորի գործերն ու մահը ուրիշների ձեռքով արդէն գրուած են: Բայց որպէս զի մեր պատմութեան մէջ ընդհատում է չլինի, այլ մի կապ հաստատուի (նախընթաց գրուածքների եւ այս պատմութեան մէջ) համառոտակի նշանակում ենք,

ինչպէս թէ մի աղիւս զեռեղելով պատի շինու-
թեան մէջ, Եւ յիրաւի, յաջորդ գլխում (Գ. Բ.)
հեղինակը մի քանի խօսքերով յիշում է Տրդա-
տին, Ս. Գրիգորին եւ նորա գործակից Արիստա-
կէսին, նոցա մահն ու թաղումը, եւ այնուհետեւ,
Գ. գլխից, անցնում է իւր բուն պատմութեան,
խոսքով կոտակից ու Վրթանէսից սկսելով:

Հեղինակի այս ծրագիրն ու բացատրութիւնը
ցոյց են տալիս, որ նա ունեցել է ձեռքի տակ
“առաքելապան”, Սանատրուկի եւ Թադէոսի,
“յակամայից քրիստոնէութիւն ընդունած” Տրդա-
տի եւ Ս. Գրիգորի վարդապետութեան ու գոր-
ծերի պատմութիւնները, ուստի ինքն աւելորդ է
համարել նորից գրել այն՝ ինչ որ արդէն կայ.
այլ արժան է դատել սկսել իւր պատմութիւնն
ուղիղ այն տեղից, որտեղ կանգ են առել իւր նա-
խորդները: Այս նախընթաց պատմութիւնները
թէպէտ հեղինակից յանուանէ չեն յիշուում՝ բայց
բարեբախտաբար յայտնի են մեզ: Առաջինն է
Վկայաբանութիւն Թադէոսի առաքելոյն¹. եր-
կրորդն է Ագաթանգեղոսի պատմութիւնը: Այս
երկու պատմութիւնները հեղինակը ոչ միայն գիտէ,
այլ եւ օգտուում է նոցանից՝ իբրեւ աղբիւրներից,
առաջինից քիչ տեղ², իսկ երկրորդից շատ անգամ:

1 Սոփերք, Ը: Այս վկայաբանութիւնը խմբագրուած է Լաբլանայի պատմութեան հայերէն թարգմանութիւնից յետոյ, որովհետեւ յայտնապէս օգտուում է նորանից, երբեմն բառացի հատուածներ իսկ փոխ առնելով նորանից: Խմբագրուած է Ե. դարի առաջին կիսում, որովհետեւ Փաւստոսի հեղինակը նրան գիտէ: Խորհնացին եւս նրան գիտէ եւ բառացի հատուածներ է փոխ առնում (Բ, ԼԳ, ԼԳ): Խմբագրողն իրան կոչում է “թարգմանիչ” Սամուէլ եպիսկոպոս, որին հրատարակիչները նոյնացնում են Շմուէլ կաթողիկոսի հետ: Սոփերք Ը, եր. 101. ծան. 27:

2 Փաւստ. Գ, ԺԳ. “Սակցն եւ դուք յայնմ” փո-
խանակ երախտեացն . . . կոչէր ի փրկական շնորհս արքայ-
ութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. եւ մի քանի
անգամ Հայոց Հայրապետութիւնը կոչելով “աթոռ” եւ
“փնակ” Թադէոս առաքեալի. — Գ. ԺԲ, ԺԳ. Գ. Գ:

Այս երկրորդի, այսինքն Ագաթանգեղոսի առնչութիւնը Փ.ի պատմութեան հետ՝ առանձին կարեւորութիւն ունի մեզ հետաքրքրող խնդրի համար, ուստի արժէ նորա վերայ կանգ առնել:

Որ Փ.ի հեղինակն անպայման օգտուել է Ագթանգեղոսի՝ երեւում է այն բաղմամբիւ՝ կարեւոր եւ երկրորդական տեղեկութիւններից, որ նա աւանդում է համաձայն Ագաթանգեղոսի՝ Այսպէս նա գիտէ, որ Սասանեաններն սպանել են Արտաւանին, որի պատճառով հայ Արշակունիները վրէժխնդիր են եղել նոցանից (Գ. ծգ. — հմմտ. Ագաթ. ա, բ) որ Ս. Գրիգոր Անակի որդին է (Գ. բ—Ագ. ժա). որ նա չարչարուել է Հայերից քրիստոնէութեան պատճառով (Գ. ժգ—Ագթ. զ—ժ). որ Գրիգորի չարչարանքներից յետոյ եկել են Հռիփսիմեանք, չարչարուել են եւ նա հատակուել (Գ. ժգ—Ագ. ժգ—ժթ). որ թագաւորը անամնական կերպարանք է ստացել, որ եւ առիթ է եղել Հայոց դարձին (Գ. ժգ—Ագ. ի). որ Ս. Գրիգոր քարոզել, վարդապետել է Հայոց (Գ. ա, բ—Ագ. վարդապետութիւն եւն). որ Քրիստոսի նախավկանների, Գայիանէի, Հռիփսիմէի եւ նոցա գործակիցների վերայ վկայարաններ են շինուել Այրարատեան գաւառում (Գ. ժգ—Ագ. ծգ). որ Ս. Գրիգոր առաջին կաթողիկոսն է եղել Հայոց (Գ. ժ.—Ագ. ծժա եւ յառաջ). որ սովորութիւն է եղել՝ կաթողիկոսութեան ձեռնադրութիւնը կեսարիայից ստանալ (Գ. ժբ. Ե. իթ.—Ագ. ծժգ. ծժզ). որ Ս. Գրիգոր սքանչելիքով կործանել է մեհեաններ Տարօնի Աշտիշատում (Գ. գ. Դ. դ.—Ագ. ծժգ.—ե). որ նա այստեղ է

¹ Փ.ի եւ Ագաթանգեղոսի բովանդակութեան համեմատութիւնը տես եւ Հ. Յ. Տաշեան, «Ագաթանգեղոս», եր. 151—155: — Յարգելի բանասէրը սակայն Փ.ի տեղեկութիւնները Ագաթանգեղոսից անկախ է համարում. եր. 187, 110. Իսկ եր. 79 Ագաթանգեղոսին համարում է բանաբաղ Փաւստոսից:

շինել առաջին եկեղեցին Ս. Զովհաննէսի անուանով (Գ. Գ. ԺԳ. եւն — Ագ. ճԺԳ). որ այստեղ մկրտաութիւն է կատարել եւ ձեռնադրութիւն է արել (Գ. ԺԳ. — Ագ. ճԺԵ). որ պատուիրել է՝ տարեցտարի այստեղ տօնել սրբերի յիշատակը (Գ. Գ. ԺԳ. Գ. ԺԵ. — Ագ. ճԺԵ). որ Տրդատ եկեղեցուն նուիրել է կալուածներ, եօթը-եօթը հող (Գ. ԺԳ. Ե. Լա. — Ագ. ճԺԹ). որ Ս. Գրիգոր քաշուել է անապատ ճգնելու (Ջ. ԺԳ. — Ագ. ճԻԳ). որ նա ունեցել է երկու որդի, վըթանէս եւ Արիստակէս (Գ. Բ. Գ. — Ագ. ճԻԳ). որ կրտսերը Ս. Գրիգորից ձեռնադրուել եւ գործակից է եղել հօրը (Գ. Բ. Գ. — Ագ. ճԻԳ). որ Տրդատ եւ Կոստանդիանոս քաշինք են դրել (Գ. Իա. — Ագ. ճԻԳ). որ հրեշտակն սպասաւորելիս է եղել Կոստանդիանոսին (Գ. Ժ. — Ագ. ճԻԵ). որ Նիկիոյ ժողովն է գնացել Արիստակէս, Ս. Գրիգորի սրբին (Գ. Ժ. — Ագ. ճԻԵ):

Եթէ ինկատ առնելու լինինք, որ Փ. Ի հեղինակը ոչ թէ Լուսաւորչի պատմութիւնն է ուզում գրել, այլ զանազան առիթներով եւ տեղերում հարեւանցի է յիշատակութիւն անում նորա մասին՝ տարակոյս այլ եւս չի մնայ, որ նա ծանօթ է Ագաթանգեղոսի պատմութեանն ամբողջապէս, այն պարունակութեամբ՝ որ ունի մեր ձեռքն հասած խմբագրութիւնը, որի գրեթէ բոլոր մասերից ծայրաքաղ տեղեկութիւններ է հաղորդում:¹

Փաւստոսի եւ Ագաթանգեղոսի մէջ եղած այս աւրնչութեան վերայ ուշագրութիւն է դար-

¹ Հակառակ ենթագրութիւն անելը, այսինքն թէ Ագաթանգեղոսի խմբագրողն է օգտուել Փաւստոսից՝ անկարելի է, քանի որ Ագաթանգեղոսի մէջ այս տեղեկութիւնները շատ մանրամասն են, եւ միմեանց հետ կապակցուած, եւ քանի որ Փ. Ի հեղինակը վկայում է, թէ իրանից առաջ գրուած կայ եղել Տրդատի եւ Գրիգորի պատմութիւնը:

ձրել եւ Հ. Բ. Սարգիսեան: Նա բաւական կէտեր համեմատել է Ագաթանգեղոսի եւ Փ.ի մէջ, որոնք բովանդակութեամբ, երբեմն նոյն իսկ լեզուի դարձուածներով նման են միմեանց, եւ եզրակացրել է, որ Փ. Բիւզանդացին օգտուել է Ագաթանգեղոսից: «Իսկ որովհետեւ Փաւստոսի երկասիրութիւնը... յունարէն գրուած էր՝ ուրեմն պէտք է եզրակացնել, թէ Ագաթանգեղոսայ գիրքն եւս պէտք է որ յունարէն լեզուով գրուած լինէր... Թէպէտեւ եկամուտ յաւելուածներու պատճառաւ՝ բոլորովին տարբեր երեւոյթ առած կը տեսնուի այժմ:» Ուրեմն բանասէր Հօր կարծիքով՝ Փ.ի հեղինակն օգտուել է Ագաթանգեղոսի նախնական յոյն բնագրից: Սակայն այս կարծիքն անընդունելի է մի քանի պատճառներով: Նախ՝ որովհետեւ Ագաթանգեղոսի հայ խմբագիրը ձեռքի տակ չէ ունեցել յունարէն ամբողջ Ագաթանգեղոս, այլ երեք կամ աւելի անկախ գրուածքներ, որոնցից ձուլել կազմել է հայերէն Ագաթանգեղոսը.² ուրեմն եւ Փ.ի հեղինակը չէր կարող ունենալ յունարէն ամբողջ Ագաթանգեղոս, այնպիսի բովանդակութեամբ ու ծաւալով, որ ունի այժմեան հայերէնը: Երկրորդ՝ եթէ ընդունենք իսկ Հ. Բ. Սարգիսեանի կարծիքը այսպիսի նախնական յունարէն

¹ Ագաթ. եւ իւր բազմադար. դադանիքն, եր. 297—301: — Ե. Մ. ԳԺՈՒԱՐԱՆՈՒԹ է ասել, թէ արդեօք ծանօթ է եղել Փաւստոսին Ագաթանգեղոս: Նա բերում է երկու նման հասուածներ այս երկու պատմագրից, սակայն նոցանից առաջինը կայ եւ Կորիւնի մէջ, իսկ երկրորդը Ս. Գրքից է վերցրած (եր. 33—34): — Ա. Գարազաշեան կայ չէ գտնում այս երկու պատմագիրների մէջ. նա Բիւզանդացուն համարելով աւելի հին քան Ագաթանգեղոս, «ուստի եւ աւելի ազատ հետզհետէ տարածուած վկայարանութեանց ազդեցութենէն» (Քնն. պատմ. Գ, 369) նորաւնով շարունակ ուղղում, հաստատում կամ հերքում է Ագաթանգեղոսին: Այսպէս վարուել են եւ ուրիշ բանասէրներ:

² A. von Gutschmid, Agathangelos. Kleine Schriften, III. B., 357—371, 375—379: — Հ. Յ. Յաշեան, «Ագաթանգեղոս», եր. 133:

Ագաթանգեղոսի դպրութեան մասին, որ կազմուած է եղել չորս առանձին նիւթերից՝¹ դարձեալ կը տեսնենք որ Փ.ի հեղինակը չէր կարող այդ յունարէնից օգտուած լինել, քանի որ Փ.ի եւ Ագաթանգեղոսի մէջ եղած նմանութիւնները մեծ մասամբ Հայոց դարձի պատմութեան մէջ են գտնուում. իսկ Հայոց դարձի պատմութեան մեծագոյն մասը, նոյն բանասէր Հօր կարծիքով, հայ թարգմանչի աւելցրածն է,² ուրեմն եւ չէ եղել ենթադրուած նախնական յունարէն Ագաթանգեղոսի մէջ: Աւերջապէս երրորդ՝ որ Փ.ի եւ Ագաթանգեղոսի մէջ նմանութիւնները ոչ միայն բովանդակութեան եւ ոճի կողմից են, այլ եւ լեզուի, երկուսի եւս բառացի կրկնուող հատուածների մէջ: Անկարելի է ենթադրել, որ Ագաթանգեղոսը եւ Փ.ք յունարէնից փոխադրուելով կամ խմբագրուելով՝ պատահաբար պահպանէին այդ բառացի նմանութիւնները հայերէնի մէջ եւս: Աւելարդ չենք համարում մէջ բերել այդ հատուածները դէմ առ դէմ, որոնք շատ պարզ ցոյց կը տան այս երկու պատմագիրների առնչութեան աստիճանը:³

ԱԳԱԹԱՆԳԵԼՈՍ (տալ. Թիֆլ. 1882):

ՓԱԽՍՏՈՍ (տալ. Վենետ. 1889):

1. «Պահովք ձգել փնէ-յօր Գրեգորիոսի վախճանին» (եր. 406):

«Հօրն էր գործակից... փնէ-յօրն Գրեգորիոսի հանգստեանն իւրոյ» (եր. 6):

2. «Եւ եղև իւր իւր Բաղդադի Եղեմիոս... զի յիւրաքրեցին զաւրբն Գրեգորիոս» (467):

«Ժողովքս աւ Բաղդադի Եղեմիոսի Եղեմիոսի սրբոց... զի յիւրաքրեցին զաւրբն Ներսէս» (73):

3. «Եւ Բաղդադի Եղեմիոս իւր իւրաքրեց ի

Եղեմիոսի զերեաց Բաղդադի

¹ Ագաթ. եւ իւր բ. գաղտն. եր. 265 եւ 289—313:

² Անդ, եր. 267:

³ Օրինակներից առաջին չորսը համեմատուած են նաեւ Հ. Բ. Սարգիսեանի յիշեալ աշխատութեան մէջ, եր. 299—300. իսկ հինգերորդը՝ ինչպէս նորա նոյնպէս եւ Ե. Մ-ի աշխատութեան մէջ, եր. 34:

տագնապելոյ ի բռնաւորաց
էրիւթիւնն որոյ, կորզելով
ընտաւահաւորութեամբը
բուծեալք փառացն Բրիտ-
տոսի, (486):

4. “Եւ հրամայեաց ի-
տառիւնն որ յաւիտեան ի տեղ-
ւոջ խաղալի ամենեցուն ի
յիշատիւնն... զի ինչո՞ւ
իտառի խաղալի՞ւն՝ զոր տօնի
իտառիցին, (472):

5. “Չաւետարանական
ընթացքն եւ զվերակացու-
թիւնն եկեղեցւոյ սրբոյ շնոր-
հօք Աստուծոյ առանց պա-
կասութեան տանէր. եւ ա-
ռաւել փութայր գունն ե-
ղեալ զամենայն որ յոր-
դորելով առ ի բարեացն
քաջալերութիւն: Չցայդ
եւ զցերեկ պահօք եւ ա-
ղօթիւք եւ ուժգին խնդ-
րուածովք եւ բարձր բար-
բառովք զաստուածադիր
պատուիրանացն զհրամանն
յուշ առնելով՝ զգուշա-
ցուցանէր ամենայն մարդոյն
(508):

6. “Եւ եղ անդ զհիմունն
եկեղեցւոյն եւ ուղղեաց
սեղան փառաց Բրիտտոսի:
Չի նախ անոր որոյ զի զի
չնկելոյ էկեղեցւոյն եւ ուղղե-
լի նախ յանաւ սուրբ Երրոր-
դութեանն, (472):

7. “Մանաւանդ վասն
աստուածածանութեան
նորա առաւել դաշնն իտե-
րն նմա, Բիւրդ կալեալ
զհաւատան որ ի տէր Բրիտ-
տոսն էր, (504):

8. “Եւ բաւարարցայ իցայց
որոշելու էրիւթիւնն յաւի-

թիւն եւ գերեզարձ առնէր,
զորս անիւ խաղալիս
խաղալի Բրիտտոսի, (78):

“Ժողովիւ ի յիշատիւնն
բնի որ էին անդ, իտառիւ
անոր մի մի քօթն անգամ...
ամի ամի խաղալիս՝ զոր տօ-
նին... իտառիւնն յիշատիւնն, (7):

“Չաւետարանական ըն-
թացքն եւ զվերակացու-
թիւնն եկեղեցւոյ սրբոյ շնոր-
հօքն Աստուծոյ առանց
պակասութեան տանէր. ա-
ռաւել եւս փութայր գունն
եղեալ յորդորելով զամե-
նեան առ ի բարեացն քա-
ջալերութիւն. զցայդ եւ
զցերեկ պահօք եւ աղո-
թիւք եւ ուժգին խնդ-
րուածովք եւ բարձրակալ
կատարման հաւատովքն
մերձաւորաց եւ հեռաւորաց
զհոգեւոր եղանակն ածէր, (18):

“Ի մեծն եւ նախ զա-
ռաջին եկեղեցին ի մայր
եկեղեցեացն ամենայն Հայ-
աստանեայց... զի յառաջ
նախ անոր շինելու էր զուր-
իտեղեցին եւ ուղղեալ
յառնն Տեառն, (36):

“Չուխան յիշեալ զու-
շնոյն իտեղ... Բիւրդն
իտառի ի մէջ կայսերն իս-
տանդիանոսի եւ ի մէջ
թագաւորին Տրդատոյ եւ
ղեալ էր, (55):

“Եւ բաւարարցայ զկարգս
պաշտօնէից յաւիտեանն

նայն Բաբարո Հայոց իշխան
նախնիքն (492):

Իշխանութիւն ի սահմանացն
Հայոց, Եւ յաֆնայն Բաբարո
Հայոց Դեպարտամենտի
Իշխան (219):

9. «Սաղմոսիւն Եւ Երգանս
Բաբարո, Ինքնիւն Դեպարտամենտի
Եւ մոմկեղնոք լուցեցեալք եւ
ջաշիւք բարեբերեալք, Բաբարո
լրջմտութեամբ եւ Բաբարո
դուարութեամբ» (481):

«Հանդերձ սաղմոսիւն Եւ
Երգանս Բաբարո, Ինքնիւն Դեպարտամենտի
Եւ Բաբարո յիշատակեալք
Եւ Բաբարո յիշատակեալք
Եւ Բաբարո յիշատակեալք» (223):

Չանց ենք անում մէջ բերել ուրիշ համեմատութիւններ Ագաթ.ի եւ Փ.ի այն տեղերից, որոնք միմեանց նման են ոչ թէ բառերով, այլ ոճով, բովանդակութեամբ եւ նիւթի դասաւորութեամբ.¹ Վերը բերուած համեմատութիւններն էլ բաւական են համոզելու, որ Փ.ի հեղինակն օգտուել է Ագաթանդեղոսի հայերէն խմբագրութիւնից:

Փ.ի պատմութիւնը պարունակում է հատուածներ նաեւ Կորնելից: Այնտեղ ուր հեղինակը պատմում է Ս. Յակոբ հայրապետի վերադարձը, տապանից մասն ստանալուց յետոյ (Գ, Ժ), նա բառացի, համառօտ կրճատումներով կրկնում է Կորնելի պատմութիւնը Ս. Մեսրոպի վերադարձի մասին, գրերի գիւտից յետոյ: Ահա այդ հատուածները:

1 Այսպէս են, օր. այն ձորակի նկարագրութիւնը, որ տեղ Հայոց առաջին մկրտութիւնը կատարուեցաւ, (Ագաթ. ճգն—ճգն = Փ, Գ, Ժգ. «Յակն աղբերն — զմկրտութիւն զօրացն բազմաց»): Ս. Գրիգորի գործունէութիւնը Ագաթանդեղոսի մէջ եւ Ս. Ներսէսինը Փ.ի մէջ (Ագ. ճգն—ճի = Փ. Դ, Դ. «բազմացուցանէր զպաշտօնեայս — գերեզարձ առնէր»): Առ հասարակ նկատուում է, որ Փ. Ս. Ներսէսի ձեռնագրութեան եւ գործունէութեան գլխում (Դ, Դ). քայլ առ քայլ հետեւում է Ագաթանդեղոսին, իրան օրինակ առնելով Ս. Գրիգորի ձեռնագրութեան եւ գործունէութեան նկարագիրն այս պատմութիւնից:

1. «Հայոց (առնոյր) Թուղթի աւետարգիրս հռ-դէն շնորհապէս պատուեալն էր, եւ ամենայն իւրաքանչեւ, ի շնորհապէս Աստուծոյ հռ-դէն պատուեալն էր» (եր. 20):

2. «Եւ ոչ այնպէս մեծն Մովսէս զուարճանայր յէջն Սինէական լերինն. չասեմք Թէ առաւելոյն՝ պակասազոյն: Քանզի յԱստուծոյ առեալ եւ աստուածագիր հրաման ի բազուկս այրն աստուածատես, ի լեռնէն իջանէր. այլ վասն վրիժազործ ժողովրդեանն, որոց Թիկունք ի տէրունեան. եւ կործան յերկիր, տիրադրուժք յիւրեանց կուռն ձուլածուին երկիր պազանէին, եւ զնորին հրամանաբերն սրտառուչ սրտաբեկ կացուցին. քանզի ի տախտակացն խորտակելոց յայտնի եղեալ տեսանէր բերելոյն Թաթուլթիւն: Իսկ այսմ երանելոյ, վասն որոյ ճառեալքս յարդարին, ոչ ըստ այնմ օրինակի որ անդն գործեցան, այլ ինքն իւրով լցեալ հոգեւոր միութարուլ Թեամբ կարծեալ զընդունելոցն յօժաբուլթիւնն, եւ ընդունելոցն յուսով ու ընտելութեան՝ դասաւորուլթիւն ճանապարհացն աւետարեր» (20—21):

3. «Քանզի եւ չկայ ինչ ի վերայ յայդեօս եւ չայդեօս զաստուածականն խտտել: Քանզի Բոյն Աստուծոյ տախտակացն շնորհապէս պատուեալն էր, եւ ամենայն իւրաքանչեւ, ի շնորհապէս Աստուծոյ հռ-դէն պատուեալն էր» (եր. 20):

«Եւ առեալ դառնայր անտի, հռ-դէն շնորհապէս պատուեալն էր, եւ ամենայն իւրաքանչեւ, ի շնորհապէս Աստուծոյ հռ-դէն պատուեալն էր» (եր. 20):

«Եւ ոչ այնպէս մեծն Մովսէս զուարճանայր յէջն Սինէական լերինն. չասեմք Թէ առաւելոյն՝ պակասազոյն: Քանզի յԱստուծոյ առեալ եւ աստուածագիր հրամանօք ի բազուկս, այր աստուածատեսիլ ի լեռնէն իջանէր: Այլ վասն վրիժազործ ժողովրդեանն, որոց զԹիկունսն ի տէրունիսն եւ կործան յերեսս՝ տիրադրուժք իւրեանցակուռն ձուլելոյն երկիր պազանէին, եւ նովին զհրամանաբերն սրտառուչ սրտաբեկ կացուցանէին: Քանզի ի տախտակացն խորտակելոց յայտնի երեւէր բերելեացն Թաթուլթիւն: Իսկ այս երանելոյս, վասն որոյ եւ ճառեալքս յարդարին, ոչ ըստ այնմ օրինակի որ անդ գործեցաւ. այլ ինքն իւրով լցեալ հոգեւոր միութարուլ Թեամբ կարծեալ զընդունելեացն յօժաբուլթիւնն յուսով գիտաւորութիւն զճանապարհացն աւետարեցաւ» (անդ):

«Քանզի յայդեօս եւ չայդեօս իւրաքանչեւ, ի շնորհապէս Աստուծոյ տախտակացն շնորհապէս պատուեալն էր, եւ ամենայն իւրաքանչեւ, ի շնորհապէս Աստուծոյ հռ-դէն պատուեալն էր» (անդ):

Բնայն ազգս երկրաշնաց յա-
րախարհն» (21):

4. «Որում պարգեւեր իւ-
րեւոյ յաշնաշնորհչէն Ա-
րարչայ, հայրաւան չափան
քնեւ ձնանդոն նորոգ եւ
սրանչիքի աջոյն իւրովն
(19: Նոյն հատուածը կայ
եւ Աբաթանգեղոսում
ճժե, եր. 479):

«Սա զհետ հօրն իւրոյ
Վրթանայ զառաքելական
յաջորդէր, հայրաւան չափ-
անչէն ձնանդոն, ... շա-
նայն ըստ պարգեւացն Ա-
րարչայ զնորհացն կատա-
րէր» (30):¹

Տարակոյս չկայ, որ այս երկու հեղինակներից
Փաւստոսն է բանաբար Վորիւնից: Սա երեւում է
շատ նշաններից. — Ա. Փաւստոսի մէջ համեմա-
տուած հատուածները կրճատ են, իսկ Վորիւնի մէջ
լիակատար. առաջին երեք հատուածը Փ.ի մէջ մի-
մեանց յաջորդում են անմիջապէս, այն ինչ Վո-
րիւնի մէջ նոքա միմեանցից բաժանուած են՝ կա-
րեւոր եւ միտքը լրացնող հատուածներով: Երրորդ
հատուածը Փ.ի մէջ անյաջող կրճատումի պատ-
ճառով անհասկանալի, գրեթէ աղաւաղուած է
թուում, եւ նախընթաց երկրորդ հատուածին
հետ ամենեւին չէ կապուում. այն ինչ Վորիւնի մէջ
այս հատուածն իմաստ ունի եւ լաւ կապուում է
հեղինակի նախընթաց մտքին հետ, որ Փ. դուրս է
ձգել: Բ. Այս հատուածները ոճի մթնոլորտամբ,
լեզուի ծանրութեամբ բոլորովին Վորիւնին են յի-
շեցնում եւ խիստ հեռու են Փ.ի պարզ, բացա-
յայտ լեզուից ու ոճից: Գ. Երանելի բառը, որ պա-
տահում է համեմատուած հատուածում՝ Վորիւնի
սովորական, յաճախ դործածած բառն է Ս. Մեու-
րոպի համար. այն ինչ Փ. այս բառն ուրիշ ան-
գամ չէ դործածում Ս. Յակոբի համար: Դ. Սո-

¹ Նոյնպէս ակնյայտի նմանութիւն կայ Ս. Սահակի
եւ Ս. Ներսէսի մահուան եւ թաղման նկարագրութեան
մէջ, սկսեալ «Տէր Յիսուս, ընկալ զհոգի իմ» խօսքերից
(Վորիւն 41—42 = Փ. Ե. Իդ.). Ս. Մեսրոպի եւ Ս. Վրթա-
նայի թաղման նկարագրութեան մէջ (Վորիւն 45 = Փ.
Գ. Ժա):

վորութիւն չունի Փ. իւր պատմական անձնաւորութիւններն ու դէպքերը համեմատել Ս. Գրքի անձնաւորութեանց ու դէպքերի հետ. այն ինչ կորիւն այս սովորութիւնն ի չարն է գործ դնում¹։

Ասածներիցս հետեւում է, որ Փ. ի հեղինակն օգտուել է նոյնպէս կորիւնի պատմութիւնից։

Արդէն Նորայր Բիւզանդացին ցոյց է տուել,² որ Փ. ի հեղինակը՝ Ս. Ներսէսի ձեռնագրութեան ժամանակ աղաւնի իջնելու պատմութիւնը յարմարեցրել է Եւսեբիոսի պատմածից Փերիանոսի մասին։ Մեզ համար հետաքրքրական լինելով գիտնալ, թէ արդեօք յունարէն Եւսեբիոսից է օգտուել հեղինակը, թէ հայերէն թարգմանութիւնից՝ մէջ կը բերենք այդ հատուածն երկուսիցն եւս։

ՆԻՍՏՐԻՈՍ, (Եկցին. պտմ.)

ՓԱՆՍՏՈՍ

«Յանկարծակի իրրեւ ի բարձանց թռուցեալ ա-վերայ սեղանոյն... Բութա-լանի մի, եւ եկն հանգիստ աղանջն ի սեղանոյն եւ է վերայ էլնայ նորա, եւ եցոյց հանգիստ է վերայ նորա... զօրինակ զայնր հոգւոյ, որ կային առ հասարակ ամե-

¹ Գիտնական ֆէտտեր, որ առաջին անգամ համեմատել է ընդարձակ հատուածը երկու հեղինակների մօտ՝ ուրիշ կարծիքի է նոցա բանաբաղութեան վերաբերութեամբ։ Նա համարում է, որ «Փաւստոսի նկատմամբ կորիւն է փոխ առնողը. որովհետեւ այս նմանութիւնն յայտնապէս աւելի լաւ կը յարմարի Յակոբայ Մժբնացւոյ վրայ, որ ըստ Փաւստոսի Սարարաւ լեռնէ կ'իջնայ, քան Մեսրոպայ, որ ըստ կորեան Միջագետքէն կու գայ» (Հայկ. աշխատասիրութիւնք, եր. 81)։ Մենք կը նկատենք, որ ընդ հակառակն աւելի վայելուչ եւ բնական է Մովսէսին համեմատել Ս. Մեսրոպի հետ, քանի որ առաջինն աստուածաուր պատգամ բերեց ժողովրդին, իսկ երկրորդը՝ աստուածատուր գրեր, որոնցով նոյն պատգամները թարգմանուեցան, եւ քանի որ երկուսի բերածներն էլ միեւնոյն նպատակին էին ծառայում— կըթելու ժողովրդի միտքն ու բարոյականութիւնը։ Մովսէսի եւ Ս. Յակոբի լեռնից իջնելու արդարէն նմանութիւնը՝ միայն առիթ է տուել Փ. ի հեղինակին՝ այս հատուածն արտագրելու կորիւնից։ — Տես եւ Վարդան Բարձրը. Վեհեա. եր. 49։

² «Բննասէր» Ա. 37-38։

բոտ նմանութեան մարմնոյ
աղաւնոյ էջ հանդեաւ ի
վերայ փրկչին մերոյ: Եւ
խոսովեցաւ աւ հաւարտի աւ
ժնայն խորհուրդն եւ աղաւ
ղակին վաւ նորա եւ ասէին,
Թէ Արժանի է դա: Եւ
նոյնժամայն աւին եւ շշտ
որոշին զաւ յաւարտի տակ
աւինն: (Չ. իԹ, եր.
478):

նայն ժողովուրդն զարմա
ցեալք եւ... աւ հաւարտի
աղաւնին է վերայ նորա,
Թէ Հաճոյ եղեր դու Աս
տուծոյ... զի նմանութիւն
եղեւ ամենասուրբ Հո
գոյն, որ ի վերայ Տեառնն
երեւեցաւ: Ապա ձեռնա
դրեցին զնա եւ հանին շշտ
որոշին յաւարտի տակ
աւինն: (Գ, դ. եր.
73—4):

Չնայելով որ Փ. ի հեղինակը Եւսեբիոսի
անպաճոյճ, դուցէ բնական դիպումով պատմու
թիւնն ընդարձակել ու զարգարել է՝ այնու ամե
նայնիւ այդ երկու հատուածի մէջ յայտնի երեւ
ում է լեզուի եւ բառերի մեծ նմանութիւն, որ
մեզ թոյլ է տալիս եզրակացնել, Թէ Փ. ի հեղի
նակն օգտուել է նոյնպէս Եւսեբիոսի Եկեղ. պատ
մութեան հայերէն թարգմանութիւնից:

Փ. ի հեղինակը խիստ յաճախ օգտուում է
եւ Ս. Գրքից, Թէ բառացի հատուածներ մէջ բե
րելով եւ Թէ Ս. Գրքի խօսքերով իւր պատմու
թիւնը հիւսելով, ինչպէս արդէն նկատուած է
ուրիշներից: Երկու դէպքումն էլ Փ. օգտուում է
է Ս. Գրքի անպայման հայերէն թարգմանութիւնից:
Օրինակներն այնքան բազմաթիւ են եւ քաջա
ծանօթ, որ հարկ չենք համարում երկարել այս
մասին: Նկատենք միայն, որ Գանիէլի մարգարէու
թիւնից մի ընդարձակ հատուած — “Յիրաւունս
անցուցեր դու զայս ամենայն ընդ մեզ... որ փա
ռաւորեալդ ես ի վերայ ամենայն տիեզերաց”
(Գանիէլ Գ, 27—45 = Փաւստ. Ե, դ.) — հե
ղինակը մէջ է բերում Հայոց Ժամագրի ընթեր
ցուածքի համաձայն, որ բաւական տարբերու
թիւններ ունի Ս. Գրքի ընթերցուածքից:¹ Յիշենք

¹ Երկից մանկանց այս ընդարձակ օրհնութիւնն ամ

նոյնպէս, որ համաձայն Հ. Գաթըրճեանի վկայութեան՝ Փ.ի հեղինակն ընդարձակ չափով օգտուել է նաեւ Ս. Բարդէ պատմագրոյն հայերէն թարգմանութիւնից, եւ «կու տայ մեզիս թարգմանութեան վրայ համառօտած պատկեր մը, որն որ մեր հայ օրինակներուն հետ այնչափ համեմատ կ'ելլէ. այնպէս որ շատ անգամ կ'ուղղէ իսկ մեր հիմակուան օրինակները»:

Վերոյիշեալ բաղդատութիւններից տեսնում ենք, որ Փ.ի հեղինակը յայտնապէս օգտուել է — Ագաթանգեղոսից, Կորիւնից, Եւսեբիոսի Եկեղեցական պատմութիւնից, Ս. Գրքից, Ժամագրքից, Ս. Բարսղի պատարագամատոյցից, որոնք բոլորը գրուած կամ թարգմանուած են հայերէն լեզուով Ե. դարի առաջին կիսում եւ հասնում են մինչեւ Ե. դարի կիսավայրը (Կորիւն, Ագաթանգեղոս): Սորանից բնականապէս եղբակացնում ենք, որ Փաստոսի պատմութիւնը կ'ընդ է գրած լինել ու իւր իւր հինգերորդ դարի երկրորդ կէտի իշխման, հաւանօրէն Ագաթանգեղոսի հայերէն խմբագրութիւնից ոչ շատ յետոյ, որի շարունակողն է հանդիսանում: Աւելի ուշ ժամանակի գրուածք չենք կարող համարել նրան, ի նկատի ունենալով լեզուն, որ սակեղէն շրջանին է պատկանում, եւ այն՝ որ նոյն դարի ութնական թուականներին նրան յիշում է Փարպեցին, Փոստոս Բուզանդացու գործ համարելով, ուրեմն ծանօթ չլինելով այս պատմութեան գրութեան գաղտնիքին:

Բաղդպէս պակասում է այժման յունարէն օրինակներում. (ըստ տպագր. Աստուածաշնչի ընկերութեան):

1 «Հանգ. ամս.» 1889, Մարտ, եր. 42—43: — Մենք հնարաւորութիւն չունինք բաղդատելու Փ.ին՝ նաեւ արեւոյ վարքերի եւ վկայաբանութիւնների հետ, որոնցից օգտուած պէտք է լինի հեղինակը, ինչպէս գիտել է Հ. Յ. Գաթըրճեան: (Անդ.)

Որ յիրաւի Փ.ի պատմութիւնը գրուած է մեր առած ժամանակամիջոցում՝ երեւում է նաեւ հեղինակի մի քանի՝ քողարկուած ձեւով արած ակնարկութիւններից, որոնք յիշեցնում են Ե. դարի Հայոց դէպքերը. նոյն իսկ կրօնական հաւածանքներն ու պատերազմը: Այս ակնարկութիւնները հեղինակը մէջ է բերում իբրեւ տեսիլ, գուշակութիւն, անէծք կամ օրհնութիւն. բայց ներկայ բանասիրութիւնը գիտէ իսկական արժէքով դնահատել հին հեղինակների այս անմեղ սովորութիւնը:

Այսպէս՝ Յուսիկին տեսիլքում գուշակուում է, որ նա ունենալու է արժանաւոր զաւակներ, որոնք պէտք է լուսաւորեն Հայոց աշխարհը, որոնց միջոցով Քրիստոս պիտի փառաւորուի շատ լեզուներով... նոքա անարժաններից Քրիստոսի համար առելութեան եւ նախանձի նշաւակ պիտի լինին:՝ Յետոյ պէտք է թագաւորէ ստութիւն, անպիտան, բանասարկու, մտախաբ մարդկանց պատճառով, եւ քչերը պիտի մնան՝ որոնք հաստատ մնան հաւատում. (Գ. Ե. — Ակնարկութիւն գրերի գիւտի, Ս. Սահակի կրած նեղութիւնների եւ հաւատուրացների վերայ): — Դանիէլ ծերունին Հայերին յանդիմանելով ասում է. «Արդ վառն այսչափ ստութեանց ձերոց եւ պղծութեանց բարձրէ Տէր զթագաւորութիւնդ ի ձէնջ, բարձրէ եւ զքահանայապետութիւնդ ի ձէնջ.», (Գ, Ժդ. — Բացայայտ ակնարկութիւն Արշակունեաց բարձման եւ Ս. Գրիգորի ցեղից քահանայապետութեան դադարման վերայ): Յետոյ մանր նկարագրում է այն վիճակը, որի մէջ պիտի գտնուին

¹ Այստեղ խօսքը չէ կարող միայն Ս. Ներսէսի մասին լինել, քանի որ տեսիլքում շարունակ գործ է ածուած յոգնակի ձեւ — նոքա, ի նոցանէ, նոցա, որք, նոքօք. ուրիշն խօսքը պէտք է վերաբերի Ս. Ներսէսին եւ Ս. Սահակին միանգամայն, եւ աւելի վերջինին:

Հայերը թագաւորութեան բարձումից յետոյ, երբ «իրանց փառքը կորցրած՝ օտար թշնամիների ձեռքը կը մատնուին եւ հպատակութեան լծին կ'ենթարկուին, որ երբեք նոցա վերայից չպիտի վերանայ» : — Ներսէս Մեծը Արշակին անիծելիս՝ նոյնպէս սպառնում եւ գուշակում է Արշակունեաց բարձումը — «ըմպել ազգիդ Արշակունեաց զյետին բաժակն. արբջիք, արբեսջիք եւ կործանեսջիք, եւ այլ մի եւս կանգնեսջիք» (Դ. ԺԵ) : — Նոյն հայրապետը Մուշեղ Մամիկոնեանին օրհնելիս՝ ասում է. «Տացէ քեզ զյաղթութեանն շնորհս զամենայն աւուրս կենաց քոց. ի ձեռն քո եւ ի ձեռն ազգի քո փրկեսցէ զերկիրս Հայոց մինչեւ յաւիտեան» (Ե. ա), որ հասկանալի է դառնում՝ երբ մտաբերենք Մամիկոնեանների կատարած դերը առաջին կրօնական պատերազմի ժամանակ : Թերեւս նոյն հանգամանքով հարկ լինի բացատրել եւ այն չափազանց զուլեատը, որ հեղինակը տալիս է Մամիկոնեաններին ամէն մի յարմար դէպքում :

Փ. ի պատմութիւնը Դ. դարում յունարէն գրուած համարող բանասէրները գուցէ առարկեն, թէ վերոյիշեալ հայերէն աղբիւրներից օգտուել, վերոյիշեալ ակնարկութիւնները Ե. դարի վերայ ներմուծել է հայ թարգմանիչը :¹ — Այսպիսի բացատրութիւն մենք ստիպուած կը լինէինք տալ յիշեալ երեւոյթներին՝ եթէ անվիճելի փաստեր ունենայինք, որ Փ. ի պատմութիւնը Դ. դարի գործ է : Իսկ երբ այս կարծիքն, ինչպէս տեսանք, զուրկ է դրական հիմքերից՝ աւելորդ կը լինի վերոյիշեալ առարկութիւնը նոյն իսկ դնելը : Բայց

¹ Այսպէս էլ ենթադրում է Ա. Գարագաշեան Յուսիկի տեսիլքի եւ Դանիէլի անէճքի մասին, (Քնն. պատմ. Գ., 28, 35) : Հ. Բ. Սարգիսեան եւս ընդունում է, որ Փ. ի պատմութիւնը «եկամուտ յաւելուածներու պատճառաւ՝ բոլորովին տարբեր երեւոյթ առած կը տեսնուի այժմ» Ագաթ., եր. 297 :

եթէ մի րոպէ համաձայնինք էլ այդ առարկութիւնն ընդունելու՝ դարձեալ ստիպուած կը լինինք ասել, որ Փ.ի պատմութիւնը յամենայն դէպս չէ կարող կոչուել թարգմանութիւն, այլ ազատ խօսքով տոյն ենթադրուած յունարէն պատմութիւնից, որը խմբագրողն ըստ կամի համեմել է սրճափ եւ սրտեղ որ կամեցել է, սկսեալ առաջին գլխից, ուր յիշում է Ե. դարի պատմական աղբիւրները, մինչեւ վերջին գլուխը, ուր յիշում է Լուսաւորչի ճգնութիւնը:

Սակայն Փ.ի պատմութեան ներքին հանդամանքները թոյլ չեն տալիս մինչեւ անդամ ենթադրել Գ. դարի նախնական, թէկուզ համառօտ՝ յունարէն սկզբնագիր: Եւ յիշուի, այս պատմութիւնը չունի այն յատկութիւնները, որոնք բնական, նոյն իսկ անհրաժեշտ պայման են ժամանակակից պատմութիւններին. ընդհակառակն լի է այնպիսի տարրերով, որոնք յատուկ են ուշ ժամանակի գրի առնուած պատմութիւններին:

Առաջին տեսակի յատկութիւնը, որ պահանջուում է ժամանակակից պատմութիւնից՝ ժամանակագրութիւնն է, թէկուզ ոչ մանրամասն ու որոշ, բայց գոնէ ստոյգ: Փ.ի պատմութեան մէջ չկայ ժամանակագրութիւն: Նա պատմական անցքերը չէ աւանդում ժամանակագրական յաջորդականութեամբ, անցքերը միմեանց հետ կապելով իբրեւ պատճառ ու հետեւանք. այլ ամէն մի գլուխը նորա մէջ (խիստ սակաւ բացառութեամբ) առանձին առանձին էպիզոդներ են, որոնք մէկը միւսից կարող են յետ ու առաջ դրուել, կամ դուրս ձգուել՝ առանց որեւէ վնասի պատմութեան ամբողջութեան: Նորա մէջ գլուխները սովորաբար սկսուում են «ապա», «յետ այսօրիկ», «յայնմ ժամանակի» անորոշ խօսքերով: Այս յատկութիւնն արդէն ցոյց է տալիս, որ հեղինակը անցքերին ներկայ եւ ժամանակակից չէ եղել, որ

նոցա մէջ եղած ներքին կապը գիտնար ու գրէր. այլ ունեցել է կցկտուր տեղեկութիւններ պատմական անցքերի մասին, որոնք դասաւորել է այնպէս՝ ինչպէս որ իրան աւելի հաւանական է թուել: Եթէ այս կցկտուր անցքերի ժողովածուի մէջ երբեմն հարեւանցի յիշուում են ժամանակագրական թուեր՝ դժբա չեն որոշում պատմական ճիշդ ժամանակ, այլ մանաւանդ մատնում են հեղինակի անտեղեկութիւնն այս մասում:՝ Մենք մէջ կը բերենք մի քանի օրինակ, որոնք բաւական են ցոյց տալու Փ.ի ժամանակագրութեան այլանշակութիւնը, եւ համոզելու՝ որ ժամանակակից հեղինակը անկարող է այդպիսի խորին տգիտութիւն ունենալ իւր պատմած անցքերի ժամանակի վերաբերութեամբ:

Արշակ Բ. ըստ Փ.ի, թագաւորած է Պարսից Ներսէս արքայի եւ Յունաց Վաղէս կայսեր ժամանակ եւ նոցա երկուստեք համաձայնութեամբ ու դաշնագրութեամբ պատերազմից յետոյ, որի ժամանակ կայսրը կաղամբավաճառի կերպարանքով լրտեսեց Պարսից բանակը եւ գերի բռնեց Ներսէսի կանանց. (Գ. իա, Դ. ա:) Արդ Ներսէս թագաւորած է 293—302 թուին, իսկ Վաղէս 364—378 թուին. ուրեմն նոքա ժամանակակից չլինելով՝ ոչ կուիւ կարող էին մշել միմեանց հետ եւ ոչ հաշտութիւն անել: Այս անտեղութիւնը վերացրնելու համար՝ հայ եւ օտարազգի պատմագիրներ կարծում են, որ Ներսէս անունը սխալմամբ է դրուած, փոխանակ Շապուհի, կամ Ներսէհը ոչ թէ թագաւորն է, այլ Շապուհի որդին: Սակայն երկու բացատրութիւններն էլ ընդունելի

¹ Ժամանակագրութեան այս բացակայութիւնը Փ.ի մէջ՝ ստիպել է Ա. Գարագաշեանին՝ գիմելու խորենացու օգնութեան, որչափ եւ անհաճոյ է այս նորան, եւ Փ.ի հաղորդած պատմական տեղեկութիւնները ճշմել ղետեղել խորենացու տուած ժամանակագրական շրջանակում: Քնն. պատմ. Գ. 4:

չեն: Փ.ի մէջ Ներսէ՛հ անունը կրկնուում է երեք անգամ (Գ, իա. Դ, ա, ծբ.), եւ երեք անգամն էլ նորան վերագրուում է միեւնոյն գործողութիւնը: Իսկ որ նա Շապուհի որդին չէ՝ երեւում է սորանից, որ հեղինակը երեք անգամին էլ նրան կոչում է Ներսէ՛հ արքայ, եւ յիշուի Ներսէ՛հ արքան էր (եւ ոչ Շապուհի որդին), որի հետ 296—297ին Հռոմայեցիք պատերազմ մղեցին Գաղերիոսի զօրավարութեամբ, եւ Գաղերիոս լրտեսեց Ներսէ՛հի բանակն ու գերի առաւ Ներսէ՛հի կանանց ու որդոց: Բայց թողնենք Ներսէ՛հ արքայի այս անկարելի եւ անբացատրելի միջամտութիւնը Դ. դարի երկրորդ կէսի գործերի մէջ, եւ Արշակի թագաւորութեան ժամանակը, ըստ Փ.ի, որոշենք Վաղէսի ժամանակով, եւ ենթադրենք նրան թագաւորած Վաղէսի թէկուզ առաջին տարում, 364ին: Արդ տեսնենք, ինչ ժամանակագրական տեղեկութիւններ է տալիս պատմագիրը Արշակի մասին:

Արշակի օրով Ս. Ներսէս ձեռնադրուում է կաթողիկոս (Դ, դ. ուրեմն ամենականութիւնը 364ին): Եւ ուղարկուում է Վաղէսի մօտ պատգամաւոր (Դ. ե). ուղղափառութեան պատճառով լրկուում է աքսոր, ուր մնում 9 տարի (Դ. գ)¹. Վաղէսի մահից յետոյ արձակուում է եւ դալիս Հայաստան (Դ, ժգ.). այս ժամանակ տեղի է ունենում Տիրիթի եւ Գնէլի դէպքը, եւ Արշակ ամուսնանում է Փառանձեմի հետ, որ Սիւնեաց Անդոկ նախարարի դուստրն էր² (Դ, ժե): Սորանից յետոյ տեղի ու-

¹ Մեսրոպ Երէց (Սոփերք, Զ, 58) ունի «ափս ինն», բայց սուրբ ընթերցուածն է «ափս ինն», ինչպէս ունի Փ.:

² Այս դէպքը Ներսէսի Յունաստան դնալուց եւ աքսորուելուց առաջ չէր կարող լինել, քանի որ հեղինակի վկայութեամբ՝ մինչեւ հայրապետի Բիզանդիոն գնալը Տիրիթ եւ Գնէլ պատանդ էին կայսեր մօտ, որ Ներսէսին աքսորելով՝ այս երկուսին արձակեց Հայաստան,

նեցաւ պատերազմ ԅունաց եւ Պարսից մէջ, որի ժամանակ Արշակ մենակ իւր զօրքով, առանց Պարսիկների օգնութեան, կոտորեց ԅունաց զօրքը Մծբինի մօտ, որին իբրեւ շնորհակալութիւն՝ Հապուհ կամեցաւ Արշակին ամուսնացնել իւր դստեր հետ. իսկ Անդոկ, տեսնելով սորանից իւր դստեր փառանձեմին հասնելէք արհամարհանքն ու վտանգը՝ խաբէական հնարներով Արշակին փախչել տուեց (Դ, ի.)։ Այս փախուստը Հապուհին կատաղեցնում է. բայց սա ութ տարի լուռ է մնում, որովհետեւ պատերազմը ԅունաց հետ դեռ շարունակուում էր (Դ, իա)։ Իսկ երբ պատերազմը վերջանում է Պարսիկների յաղթութեամբ՝ Հապուհ սկսում է Արշակի դէմ վրէժխնդրութեան պատերազմ, որ տեւում է աւելի քան երեսուն տարի, (Դ, ի, իա)։ որից յետոյ Արշակ ստիպուած է լինում գնալ Պարսկաստան եւ անձնատուր լինել Հապուհին, որ նրան Անյուշ բերդն է դնում (Դ, ծդ)։

Թողնելով այս պատմական անցքերի շարժառիթներն ըստ Փ. ի, որոնք աւելի վայելուչ են բոմանների, մանաւանդ հէքեաթների մէջ, թողնելով ուրիշ բազմաթիւ անտեղութիւնները՝ ուշադրութիւն դարձնենք միայն ժամանակագրութեան վերայ։ Ս. Ներսէսի վերագարծը Հայաստան կարող էր տեղի ունենալ ոչ վաղ քան 378 թուին (Վաղէսի մահուան տարին)։ Թող հէնց նոյն տարին Արշակ ամուսնանար Փառանձեմի հետ եւ ԅունաց զօրքը կոտորէր Մծբինի մօտ։ Դսորանից յետոյ ուրեմն անցնում են Հապուհի ԅունաց հետ պատերազմների 8 տարին, ուրեմն, ամենականուին հաշուելով, մինչեւ 386 թիւը։ Սորանից յետոյ

Արշակի սիրան ամոքելու համար (Դ, ե)։ Իսկ Գնէլի սպանութեան ժամանակ Ներսէս աքսորից վերադարձած էր եւ միջնորդում էր թագաւորին՝ խնայել իւր եղբորորդուն։

Շապուհի եւ Արշակի մէջ սկսուած պատերազմները, որ երեսունից աւելի տարի տեւեցին՝ հասնում են ըստ Փ.ի մինչեւ 416—420 թուականները՝։ Այն ինչ ստոյգ յայտնի է, որ Շապուհ Բ. մեռաւ 379ի ամառը, իսկ Արշակ Անյուշ բերդը դրուեցաւ 368ին։

Ո՛րչափ էլ աշխատինք բռնի ձգձգելով Փ.ի այս ժամանակագրութիւնը համաձայնեցնել ստոյգ ժամանակագրութեան հետ՝ դարձեալ կարկատանք չի յաջողի, այլ աւելի մեծ պատառուածք կ'առաջացնէ։ Դնենք, օրինակ, որ Արշակ թագաւորել է ոչ թէ Վաղէսի, այլ Կոստանդի ժամանակ, 353ին. դնենք Արշակի ամուսնութիւնը Փառանձեմի հետ Ներսէսի Բիւզանդիոն զնալուց առաջ. դնենք Արշակի կարծեցեալ յաղթութիւնը Յունաց դէմ ոչ Վաղէսի մահից յետոյ, այլ 350ին (ըստ Հ. Գաթրքճեանի, որ սակայն կասկածելի է համարում այս դէպքը, Տիեղ. պատմ. Բ. 497), կամ 359ին (ըստ Գարադաշեանի, որ հաւանական է համարում այս, Բնն. պատմ. Գ. 74—80). դնենք Շապուհի Յունաց դէմ մղած պատերազմները վերջացած 364ին, Յովհաննոսի անպատիւ ու ստոր դաշնադրութեամբ։ Սորանից յետոյ դարձեալ պէտք է դնենք ըստ Փ.ի՝ երեսուն եւ չորսամեայ պատերազմ Արշակի եւ Շապուհի մէջ, որ կը հասնէ մինչեւ 398 թուականը։ Այս երեսնամեայ պատերազմի տարիները չենք կարող սխալմամբ դրուած համարել, քանի որ հինգ անգամ կրկնուում են Փ.ի մէջ — երեք անգամ հեղինակի վկայութեամբ (Գ. ի, իա, ծ.), մի անգամ նախարարների բերանով (Գ. ծա.) եւ մի անգամ Շապուհի (Գ. ծդ.)։ Ուրեմն դարձեալ տեսնում ենք, որ Փ.ի պատմութիւնը վերիվայր անելով, նորա պատմական անցքերի յաջորդականութիւնը հիմնովին խախտելով հանդերձ՝ ստիպուած ենք այնու ամենայնիւ Արշակին տալ ըստ

Փ.ի աւելի քան քառասուն տարի թագաւորութիւն, այն ինչ նա խսկապէս 20 տարուց էլ պահած է թագաւորել:

Որ Փ.ի՝ Արշակի մասին տուած ժամանակագրութեան մէջ թիւրիմացութիւն չկայ, որ նա լուրջ կերպով Արշակին տալիս է քառասունից աւելի տարի՝ երեւում է եւ ուրիշ կողմնակի տեղեկութիւններից, որ մեզ մատակարարում է այս հեղինակը: Երեսնամեայ պատերազմների մէջ մեծ դեր է կատարել, յաճախ Պարսից զօրքին առաջնորդ է հանդիսացել Մերուտան Արծրունին: Տեսնենք, թէ ո՞վ է այս անձն ըստ Փ.ի: — Տիրան, Արշակի նախորդը, Հայր մարդպետի քուրթեամբ կոտորել է տալիս ամբողջ Արծրունեաց տոհմը. սղատուում է միայն մի ծծկեր երեխայ, Հաւասպ, որին Մամիկոնեանները առնում փախչում են իրանց Տայոց ամրութիւնները, մեծացնում են եւ իրանց տոհմից կին են տալիս, որից դարձեալ սերունդ է Արծրունեաց տոհմը (Գ. Ժբ): Հաւասպը յետոյ վրէժ է առնում Հայր մարդպետից, որոի ժամանակ նրան դաւաճանութեամբ սպանելով (Գ. Ժդ): Այս Հաւասպի որդին է Մերուտան, որին հեղինակը կոչում է «քեւորդի Վահանայ ի Մամիկոնեան տոհմէն» (Գ. ծ: Համեմատել եւ Ե. խգ. — «Սակայն դա մեր եղբայր է» ասում են Մամիկոնեան կանայք Մերուտանի մասին): Քանի՞ տարի էր հարկաւոր, որ Տիրանի ժամանակ ծծկեր Հաւարը՝ մեծանար, ամուսնանար, որդի ունենար (Մերուտան), որ նոյնպէս մեծանար, Արշակի դէմ ապստամբէր եւ երեսնամեայ պատերազմներում վտանգաւոր հակառակորդ հանդիսանար Հայերի դէմ: Դնենք Տիրանի թագաւորութեան սկիզբը 343ին.¹ դնենք Արծրունեաց կոտորածը հէնց նորա թագաւորութեան առաջին տարին. այս թուի

¹ Ըստ Ա. Գորադաշեանի, Գ, 4: — Աւելի կանուխ դնել կարելի չէ:

վերայ աւերացնելով դոնէ 40 տարի (մինչեւ ծծիկեր Շաւաապի որդին Մերուժան չափահաս դառնար), կը տեսնենք որ Մերուժանի մասնակցութիւնը երեսնամեայ պատերազմին պէտք է տեղի ունենար Դ. դարի ութսնական թուականներում: Այս հաշիւը, ինչպէս տեսանք՝ բոլորովին ճիշդ է ըստ Փ. Ի, բայց բոլորովին սխալ ըստ Ճշգրիտ պատմութեան:

Մի ուրիշ հաշիւ: Արշակը փառանձեմից ունենում է որդի Պապ (Դ. ԺԵ). սա չափահաս դառնալով ամուսնանում է եւ ունենում է երկու որդի, Արշակ եւ Վաղարշակ (Ե. ԼԷ). սոքա էլ չափահաս դառնալով ամուսնանում են եւ միասին թագաւորում (Ե. ԻԳ). որից յետոյ տեղի է ունենում Հայաստանի բաժանումը Յունաց եւ Պարսից մէջ: Արդ Պապ՝ Փ. Ի հաշուով՝ չէր կարող ծնած լինել 379ից վաղ (Ս. Ներսէսի վերադարձը Վաղէսի մահից յետոյ, Գնէլի սպանութիւնը եւ Արշակի ամուսնութիւնը փառանձեմի հետ), ոչ երկու որդի ունենալ առաջ քան 395 թ. իսկ սոցա ամուսնանալը եւ թագաւորելը կարող էր պատահել ոչ վաղ քան Ե. դարի սկզբներում: Այն ինչ՝ համաձայն ստոյգ պատմութեան, Պապ արգէն սպանուած էր 374ին, իսկ Հայաստանի բաժանումն եղաւ 384ին:

Այստեղ էլ աշխատենք ուղղել Փ. Ի Ժամանակագրական անտեղութիւնները եւ համաձայնեցնենք արտաքին ստոյգ պատմութեան հետ, ենթադրելով Արշակի թագաւորելը 353ին եւ հէնց նոյն թուին նորա ամուսնութիւնը փառանձեմի հետ. ուստի Պապ պէտք է ծնած լինէր ոչ վաղ քան 353ին: Արդ սա թագաւորում է 368ին, այսինքն 14 տարեկան, եւ սպանուում է 374ին, այսինքն 20 տարեկան: Նորա մեծ որդին, Արշակ, որ ծնած պէտք է լինէր ոչ վաղ քան 370ին (իւր հօր գոնէ 16 տարեկան հասակում), եւ

փոքրը, Վաղարշակ, որ ծնած պէտք է լինէր ամենականութիւնը 371ին՝ ամուսնանում են, որից յետոյ թագաւորում են 379 թուին, այսինքն ամուսնանում են 7—8 տարեկան հասակում եւ թագաւորում են 8—9 տարեկան: Այս հաշուի անտեղութիւնն ինքն ըստ ինքեան՝ շատ աչքի է ընկնում, մանաւանդ երբ յիշենք, որ Պապ մի քանի մեծամեծ պատերազմներ է մղել Պարսիկների դէմ, բազմաթիւ ապստամբութիւններ նուաճել եւ նորանոր «բարեկարգութիւններ» մտցրել Հայաստանում, Ներսէս Մեծին թուեաւորելուց յետոյ, 14—19 տարեկան խակ հասակում. որ Պապից յետոյ ըստ Փ.ի թագաւորել է Վարազդատ, որին հալածելուց յետոյ Մանուէլ հաշտութիւն է անում Պարսիկների հետ, ապա մի քանի կռիւ է մղում նոցա դէմ, յետոյ եօթը տարի խաղաղութեամբ կառավարում է երկիրը, մինչեւ Արշակին ու Վաղարշակին թագաւորեցնելը:

Տեսնում ենք ուրեմն, որ Փ.ի ժամանակագրութիւնը լիքն է սխալներով: Ժամանակակից պատմագիրը չէր կարող Գ. դարի 50—60ական թուականներում ապրող թագաւորին մի կողմից կապել Ներսէսի հետ (Գ. դար) եւ միւս կողմից նորա թագաւորութիւնը հասցնել մինչեւ Ե. դարի 20ական թուականները. չէր կարող նորան տալ քառասունից աւելի տարի թագաւորութիւն, մինչդեռ նա թագաւորել է 15—19 տարի. չէր կարող վերջապէս այնպիսի պատմական-ժամանակագրական տեղեկութիւններ եւ յաջորդականութիւններ հաղորդել, որոնք յայտնապէս հակառակ են ստոյգ պատմութեան: Այս անտեղութիւնները վարագուրելու համար եղած փաստաբանութիւնները կամայական եւ բռնի են, ուստի եւ անցոր:

1 Օրինակ, Ա. Գարագաշեան Արշակի երեսունեւ չորսամեայ պատերազմները Շապուհի հետ՝ հաշուում է «ի մահուանէն Տրդատայ» (Քնն. պատմ. Գ, 104), հակառակ

Միակ բանաւոր բացատրութիւնն այս է, որ հեղինակը ժամանակակից չէ իւր պատմած անցքերին, այլ աւանդութիւններից ու վէպերից է գրում՝ ինչ որ գրում է:

Փ.ի պատմութիւնը չունենալով ժամանակակից գրութեան բոլոր յատկութիւնը — ժամանակագրական եւ անցքերի յաջորդականութեան ստուգութիւն՝ ընդհակառակն ունի այն բոլոր հանգամանքները, որոնք յատուկ են ոչ-ժամանակակից գրութեան, այսինքն հրաշքների կուտակութիւն, աւանդութիւններ, առասպելներ, շափաղանցութիւններ: Գիրքը ծայրէ ծայր լի է այս տարրերով, այնպէս որ օրինակներ բերելը աւելորդ աշխատութիւն է: Եթէ մեր յիշողութեան մէջով անցկացնէք այս պատմութեան նկարագրած գլխաւոր գործող անձնաւորութիւնները, — Վրթանէս, Յուսիկ, Ներսէս, Դանիէլ, Խադ, Տիրան, Արշակ, Պապ, Վասակ, Մուշեղ, Մանուէլ, Մերուտան, — կը տեսնենք, որ սոցանից ամէն մէկը զարգարուած է վերոյիշեալ հրաշային եւ վիպական տարրերով, որը շատ, որը սակաւ շափով, ուրեմն եւ ոչ մէկը ճշգրիտ պատմական տիպ չէ ներկայացնում: Նոյն իսկ բուն պատմական անցքերը Փ.ի մէջ մեծ մասամբ կրում են վիպական-գիւցազներգական գրոշմ եւ ոտնոյտ մատնում են իրանց աղբիւրը: Եւ յիշաւի, կարող էր ժամանակակից հեղինակը գրել Արշակի այն երեսնամեայ պատերազմների պատմութիւնը, որոնց մէջ քսանից աւելի անգամ Պարսկաստանից ա-

հեղինակի քանիցս անգամ կրկնած բացայայտ վկայութեան, թէ այդքան տարի Արշակն է մղել պատերազմ: Նոյն հեղինակը զարմանալի ազատութեամբ է վարուում Փ.ի հետ ասելով, թէ «Ը-դ Բո-ղանդայ» թագաւորին Արշակայեղաւ հաճութեամբ երկուց թագաւորաց, Վո-դանդայ եւ Ը-դհոյ (Քնն. պատմ. Գ., 47), այն ինչ քառ Բուզանդայ (Գ., Խա. Գ., ա) թագաւորին Արշակայեղաւ հաճութեամբ վաղ-ի-ի-Ներսէսէ:

Հազիւ բանականներ են գալիս Հայոց վերայ, երբեմն 4--5 միլիոն բազմութեամբ, եւ Վասակ զօրավարն ամէն անգամ բոլորին կոտորում է այնպէս, որ նոցանից ոչ մին չէ մնում, «բայց միայն չարագործն Մերուժանն միաձի ճողոպրեալ» փախչում է։ Այ՛ կախարդ Մերուժանը 17 անգամ մենակ փախչում ազատուում է ընդհանուր կոտորածից. ի վերջոյ մօտ 30 միլիոն պարսիկ կոտորելուց յետոյ Արշակ... անձնատուր է լինում Շապուհին։ Կարելի է արդեօք ենթադրել, որ ժամանակակից հեղինակն ընդունակ լինէր հաւատալու եւ պատմելու, թէ Դանիէլ եպիսկոպոսը կօշկով քաշելով անցնում էր ջրերի վերայով. թանձր ձիւների միջով ճանապարհորդելիս՝ ձիւնը ցամաքում՝ սեւ հող էր դառնում։ Հեռու տեղ ուղեւորուելիս՝ փայլակի նման թռչելով յանկարծակի ուղած տեղն էր լինում. մեռելներ էր յարուցանում, եւ դեռ աւելի մեծ հրաշքներ էր գործում։ Այսպիսի հրաշքներ սուրբ անձերի մասին, առասպելական քաջութիւններ ազգային հերոսների մասին կարող են ստեղծուել եւ ստեղծուում են. բայց սորա համար հարկաւոր է ժամանակ, սերունդների յաջորդութիւն, որոնք միմեանցից աւանդաբար առնելով՝ հետզհետէ զարդարելին նախնեաց աւանդած պարզ դիպուածները։ Գերբնական երեւոյթների, առասպելների եւ չափազանցութիւնների ներկայութիւնը որեւէ պատմական գրուածքում՝ մասնում է նորա յետնազոյն ժամանակի գործ լինելը եւ նորա աղբիւրները — աւանդութիւն եւ վէպեր։

Հարկաւոր էր առանձին ուսումնասիրութիւն՝ որոշելու համար բովանդակութիւնն ու ծաւալն այն վէպերի եւ աւանդութիւնների, որոնցից հիւսուած է Փ.ի պատմութիւնը։ Ներկայ յօդուածի նպատակից դուրս լինելով այսպիսի ուսումնասիրութիւն՝ հարեւանցի միայն կը նկատենք, որ Փ.ի պատմութեան մէջ երեւում են

ժողովրդական վիպասանութեան երեք առանձին գաւառներ. — ա) Հոգեւոր, բ) Արքունական տան եւ գ) Մամիկոնեան տան: Առաջինի մէջ մանուկ են Վրթանէս, Յուսիկ, Դանիէլ եւ մանաւանդ. Հայոց սիրելի հայրապետը Մեծն Ներսէս, որի պատմութիւնն առանձնապէս զարդարուած է սուրբ Հայրերի, նոյն իսկ Ս. Գրոց անձնաւորութիւնների դիպուածներով:՝ Երկրորդի մէջ գլխաւոր տեղն է բռնում Արշակը, իւր ամուսնութեամբ Փառանձեմի հետ,² որ այնքան յիշեցնում է Արտաշէսի եւ Սաթինիկի վէպը, Արշակաւանի շինութեամբ եւ աւերածով, իւր յաճախակի պատերազմներով Սասանեան ահեղ զօրութեան դէմ, կալանաւորութեամբ ու սղերբական վախճանով: Երրորդը մեղ ներկայանում է իբրեւ Մամիկոնեան տան տոհմային վիպասանութիւն, որտեղ գովասանութեամբ աւանդուում էին այդ նախարարութեան ծագումն ու պատմութիւնը, Մամգունից եւ Կոնակից սկսեալ մինչեւ Մանուէլ: Այստեղ էլ գլխաւոր հերոսն է Վասակ ռպարապետը, Արշակի գայեակն ու անբաժան ընկերը նորա թագաւորութեան սկզբից մինչեւ Անյուշ բերդը, մի տիպար անվեհեր քաջութեան, հայրենասիրութեան եւ անձնանուէր

1 Նորա ձեռնագրութեան գնալն ու վերադառնալը՝ Լուսաւորչին. ձեռնագրութեան ժամանակ աղանձի իջնելը՝ Փերիանոսին. Հայաստանում կատարած գործերը՝ Լուսաւորչին ու Մեսրոպին. Վաղէսի հիւանդ որդու դիպուածը՝ Ս. Բարսեղին. աքսորը՝ շատ հայրապետների արքորին. Նպատի վերայ աղօթելը՝ Մովսէս մարգարէին (Եւրգ, ԺԷ, 8—13). մահը եւ թաղումը՝ Ս. Սահակին: Թերեւս նաեւ՝ անապատ կղզում՝ հրաշքով կերակուելը՝ Իսրայելացւոց մանանային եւ ջրին՝ անապատում. Արշակաւանի անեծքը՝ Յովնան մարգարէի քարոզութեան Նինուէում: — Ս. Ներսէսի վարքում Փ. ի հեղինակն էլ իւր կողմից շատ բան ունի աւելցրած:

2 Մի աղօս ակնարկութիւն Տիրիթ-Փառանձեմ վէպի դպրութեան մասին կարծես երեւում է հեղինակի այս խօսքում. «Եղեւ նա (Փառանձեմ) մայր ողբոցն, եւ ձայնարկութն ամենայն ի ձայն ողբոցն սկսան նուագել զիրան տրփանացն Տիրիթայ, զակն գնելն» եւն: Դ. ԺԵ:

տիրասիրութեան,¹ Գուցէ այս աղբիւրներից դուրս
հեղինակն ունեցած լինի եւ գրաւոր պատմական
աղբիւր, որ եթէ եղել է՝ չէ ունեցել էական նշա-
նակութիւն եւ տիրապետող ոյժ գըքի ոգու,
բնաւորութեան, ոճի ու ծաւալի վերայ, այլ ծա-
ւայել է իբրեւ օժանդակ երկրորդական աղբիւր
իւր վիպական եւ վկայաբանական աղբիւրների
պակասը լրացնելու:

Այս ազգային վիպասանութիւններն ու
վկայաբանութիւններն են եղել մեր կարծիքով
այն գլխաւոր աղբիւրները, որոնցից անծանօթ հե-
ղինակը, — ինչպէս նորանից առաջ Ագաթան-
գեղոսի խմբագիրը եւ նորանից յետոյ քերթողա-
հայրը, — հիւսել է իւր պատմութիւնը: Այս
տեսակէտից միայն նայելով՝ մեզ հասկանալի կը
դառնան Փ. ի պատմութեան ներքին եւ արտաքին
բնորոշ յատկութիւնները — տարադէպ գործերը,
որոնք ծիծաղելի են իսկական պատմութեան մէջ,
ժամանակագրութեան բացակայութիւնը կամ ան-
ստուգութիւնը, անձնաւորութիւնների շփոթու-
թիւնը մէկը միւսի հետ, էպիզոդական, անկապ
գլուխները, լեզուի ժողովրդական ոգին, ճոխ
նկարագրական, բազմաբառ բայց պարզ ոճը են:

Ո՞վ է այս անծանօթ հեղինակը. — չգի-
տենք. բայց որ նա հայ է՝ մենք տարակոյս չունինք:
Մենք արդէն յիշեցինք, թէ ինչպէս նա բարձր
տիտղոսներ է տալիս Հայոց թագաւորներին, ինչ-
պէս բնական, կենդանի, ժողովրդական է նորա
լեզուն, որ թարգմանական լեզուի կապանքները
չէ կրում:² Աւելցնենք այստեղ նորա մի քանի

¹ Մեզ թուում է, թէ երեսնամեայ պատերազմ-
ների էպիզոդների մէջ հեղինակը պահպանել է վէպին
յատուկ արտայայտութեան ձեւը, կաղապարը. — «Ապա
գայր... (սյսբան բիւրու): — Ապա ելանէր զօրավարն Վա-
սակ . . . զամենայն ընդ աւուր հանէին, բայց միայն Մերու-
ժանն . . . փախէր միաձի»:

² Մինչեւ անգամ արուեստական պաճուճանքներ ու

ուրիշ յատկութիւնները, որոնք միայն հայ հեղինակը կարող էր ունենալ: Նա չափազանց նախանձախնդիր է ազգային փառքին ու պատուին. հայը նորա հաւատով անպարտելի է: Ամբողջ պատմութեան մէջ, որ լինքն է հարիւրաւոր պատերազմների յիշատակութեամբ ու նկարագիրներով՝ Հայերը ոչ մի անգամ չեն յաղթուում ճակատամարտի մէջ, այլ միշտ յաղթում են, այն էլ մեծ մասամբ թշնամու բանակն անմի անելով: Եթէ թշնամին արշաւում է Հայաստան, կոտորածներ է անում, գերի է տանում, այդ լինում է միայն այն դէպքում՝ երբ թագաւոր չկայ, կամ նա աշխարհի ուրիշ կողմումն է գտնուում, կամ ուրիշ բանով է զբաղուած լինում. բայց ճակատ առ ճակատ կռուելիս՝ Հայերը միշտ կոտորում են տասնպատիկ ու քսանպատիկ բազմութիւ թշնամուն: Նորա պատմութեան մէջ գործող հայ թագաւորների վախճանը յայտնի է — Տիրան գերի է տարուում Պարսկաստան. Արշակ Անյուշ բերդում է մեռնում. Պապ սպանուում է Յունաց կայսեր հրամանով: Բայց հեղինակին ազգային հպարտութիւնը թոյլ չէ տալիս ճանաչել կամ գրել, որ նոցա այս տեսակ վախճանի պատճառը նոցա տկարութիւնն է: Ո՛չ. ամէն անգամ մի անակնունելի դիպուած է պատահում, որի առաջ անգոր է ամենազօրաւոր մարդն անգամ. — մէկին դաւաճանութեամբ բռնում են՝ երբ զօրքը բացակայ է լինում. միւսին Շապուհ «մեծաւ աղաչանօք եւ պատարագօք, հրովարտակօք եւ սիրով», իւր մօտ է կանչում՝ երբ բոլոր նախարարներն էլ նորանից ձեռքն-

բառախաղեր է պարունակում. — «Մեծապարգեւ մեծապատիւ մեծարեք». «Չծերութեան պատիւն պատուականութեան». «Չհեռ նորա նորին նմանին շարշարեցին վասն նոյն նորին իրաց». «Տաց ձեզ ձեռն ի ձեռն ի ձեռս ձեր»: — «Ճանապարհ ընդ եղիւր» է. եւ մեծապէս խորեաց Մերուտանն, տրամեցաւ ընդ բանսն» եւն: (Գ. Ժ. իա. Գ. Ժգ. Դ. Ժ. Ե. իգ.):

Թափ են եղել, երկարատեւ պատերազմներից
 ձանձրացած. երրորդին խարդախութեամբ սպանում
 են սեղանի վերայ: Նա Հայոց զօրքը, նորա սարքը
 ու կարգը, հայրենասիրութիւնն ու տիրասիրու-
 թիւնը նկարագրում է զմայլմունքով. — “Զորք-
 հարիւր. հազար զօր կուռ վառեալք, որ ընտիրք եւ
 պատերազմողք էին, լի արութեամբ արուեստաց
 նահատակութեանն. նիզակաւորք, սուսերաւորք,
 աղեղնաւորք անվրէպք, կորովիք. վաղրաւորք,
 սակրաւորք, որք ոչ գիտէին զերկիւղ զանգիտելոյ
 յարանց յախոյանց. համակ հեծելազօրք զրահաւ-
 որք, պատենաղէնք, սաղաւարտաւորք, դրօշաւորք,
 կազմ նշանաւորք, բազմաձայն փողարօքն” (Դ. Ի):
 “Եւ գտան ի ժամանակին անդ ընդ ձեռամբն զօ-
 րավարին Վասակայ արք գործոց իբրեւ վաթսուն
 հազար, ընտիրք եւ պատերազմողք, որ միամիտք
 եւ միասիրտք էին միաբանութեան գործոցն պա-
 տերազմին, հասանել մարտնչել ի վերայ որդւոց
 եւ կանանց իւրեանց, եւ ի վերայ աշխարհին դնել
 զանձինս իւրեանց մինչեւ ի մահ եւ ի վերայ աշ-
 խարհին եւ գաւառացն բնակութեան. հասանել
 մարտնչել ի վերայ եկեղեցեացն իւրեանց, ի վե-
 րայ ուխտին պաշտամանն սրբոց եկեղեցեաց
 իւրեանց, ի վերայ հաւատոյ ուխտին անուան Աս-
 տուծոյ իւրեանց, փոխանակ բնակ տերանց իւրեանց
 Արշակունւոց” (Դ. Իգ): “Զամենայն խոյեանան,
 զոր ի ճակատուն յայն սպանանէին՝ (զօրքն Հայոց)
 նուիրէին իւրեանց առաջի Թագաւորին Արշակայ.
 զի զամենայն զոր սպանանէին՝ ասէին. Արշակայ
 Թագաւորին մերոյ զոհ լիջիր: Եւ յորժամ Հայոց
 ազատանոյն խոյեանացն նիզակաւորացն ռազմ ա-
 րարեալ յարձակեալ զգօրսն Պարսից նիզակաւորքն
 առեալ ընկենուին՝ ասէին. Առ Արշակ քաջ” (Ե.
 Ե): Նոյն իսկ Շապուհ զմայլում է Հայոց զօրքի
 քաջութեան ու տիրասիրութեան վերայ. “Յոր-
 ժամ Հայոց նիզակաւորքն առաջի կարգէին —

պատմում է նա իւր իշխաններին — այսպէս յարձակէին, որպէս զեառն մի բարձր եւ կամ որպէս զաշտարակ մի հաստաբետ, հզօր եւ անշարժ... զարմացեալ եմ ես ընդ մտերմութիւն միամտութեանն հայաստան գնդին ընդ տիրասիրութեանն... երանի որ Հայոց գնդին տէր իցէ, այնպիսի տիրասէր եւ միաբան միամիտ զօրացն» (Ե. Ե)։ Հեղինակը անհուն սիրով սիրում է Արշակունի թագաւորներին, որոնց շարունակ կոչում է «Բնակ տեալք», աշխարհին, որոնց համար Հայերը պարտաւոր են իրանց անձը զոհել, արիւն թափել։ Ո՛վ որ Արշակունի թագաւորի դէմ ապստամբում է կամ դաւ է լարում՝ հեղինակը բառ չէ գտնում նրան հայհոյելու։ «Վատանշան», «Հարագործ», «պիղծ», «անօրէն», «մեղաւոր», «կախարդ» — այս անուններով է նա կնքում Մերուժանին։ Նա չէ կարող զսպել իւր զայրոյթը Փիսակ Սիւնու դէմ, որ իւր թագաւորի վերայ քսութիւն արաւ։ «Այր մի անարգ, որ ոչինչ պակաս քան զգեւ էր մնլորութեամբ... զայս ամենայն լուաւ Վարդ-Շապուհ ի կատաղախօս, ի շնաբերանն Փիսակայ... բանքն յունկն զօրավարին Պարսից հասանէին ի բերանոյ շորիկն, շոգմոգն, տիրանենկն եւ տիրադրութն, տիրապանուն, տիրամատնիչն Փիսակայ, յայն յաշխարհակորոյս յառնէ անտի» (Գ. Ի)։ Եւ այս այն դէպքում՝ երբ Փիսակ մատնել է մի թագաւորի՝ որին ինքը հեղինակը կոչում է անպիտան եւ անմիտ թագաւոր (Գ. Ժգ, Ժը)։ Այն սքանչելի առասպելը, որ հեղինակը պատմում է իբր տեղի ունեցած Արշակի կալանաւորութեան ժամանակ (Գ. Ժգ), ցոյց է տալիս, թէ հեղինակն ինչ կոյր հաւատ ունէր Հայոց հողի ու ջրի զօրութեան, հայ թագաւորի անպարտելիութեան վերայ իւր բնիկ երկրում։ Դրաստամատի պատմութիւնը, որ բոլոր աշխարհային պատիւներից լաւ է համարում՝ մի օր միայն մխիթարել իւր բնիկ տիրոջ, բանտար-

կուած Արշակին, եւ նորա անձնասպանութիւնից յետոյ ինքն էլ չէ ուզում այլեւս օր ու արեւ տեսնել. Վասակի, Մուշեղի եւ Մանուէլի գործերը, զօրքի անձնագործութիւնը — սոքա բոլորը արտայայտում են հեղինակի հայեացքն ու իդէալը — անպայման սէր եւ հաւատարմութիւն դէպ ի Արշակունի հայ թագաւորները:

Այսպիսի մի հեղինակ, որ խորին հմտութիւն ունի հայ ժողովրդի բարքերին եւ հաւատալիքներին,¹ որ Հայաստանի տեղագրութեան այնպէս ծանօթ է, ինչպէս քիչերը մեր պատմագիրներին, որ գիտցել է Հայոց ազգային պատմական վէպերն ու նոցանից օգտուել, որ ամենայն սիրով սիրում է Հայոց «բնիկ» Արշակունիներին, Հայոց «մեծ», «քաջարանց» թագաւորներին, որ Հայոց զինուորական եւ ազգային պատուին այն աստիճան սիրահար է եւ նախանձախնդիր — այսպիսի հեղինակն, ասում ենք, չէ կարող լինել օտարազգի. նա հայ է եւ մարմնացում Հայոց ազգային ինքնաճանաչութեան, սնափառութեան հասնող պատուասիրութեան, հաւատալիքներին — ամբողջ հայ ոգուն:²


Այս հայ մատենագիրը (գուցէ մէկը Ս. Մեսրոպի աւագ աշակերտներից, որոնց առանձին գրուածքները չեն յիշատակուում), Ե. դարի միջավայրում, օգտուելով գլխաւորապէս հայ անգիր ու գրաւոր աղբիւրներից՝ հիւսել է իւր ազգային պատմական վէպը, այնպիսի լեզուով՝ որի մէջ ցուլնում է ժողովրդական-վիպական ոգին: Բայց ժամանակի սովորութեան համեմատ, աւելի դրբի յաջողութիւնը գիտելով՝ ծածկել է իւր անունը,


1 Գ. Ի. ծգ. Ե. Իր. Իե. Լլ. Իգ. Ձ. Ը. Թ:

2 Գեղեցիկ է բնորոշել այս հային Շ. Գաթրիճեան. «Բուն հայ հոգէն բուսած, բոլոր հայ երկիրը թշաւ ու քլաւ չափած, ամէն մէկ տողին մէջ իր հայրենակցաց դադափարաց գունով անած մարդդ կոշեւով հեղինակին:» «Հանգ. ամս.» 1889, Գ. եր. 41:

եւ իւր գրուածքը վերագրել է այնպիսի մարդու՝ որի անունը կարող էր գրաւական լինել իւր պատմութեան հաւատարմութեան։ Այսպիսի անձ է եղել հեղինակի կարծիքով՝ ծերունի հռոմ փառաոս եպիսկոպոսը, Ս. Ներսէսին ձեռնադրողը եւ նորա գործակիցը, Դ. գարի գէպքերին ժամանակակիցը, որին եւ գիտմամբ կոչում է «ժամանակագիր Ռժ պատմագիր», «ժամանակագիր Յոննայ», իւր անձն ու ազգութիւնը վարագուրելու եւ իւր պատմութեան յարգը բարձրացնելու համար։ Այսպէս է վարուել եւ հեղինակին ժամանակակից մի ուրիշ մատենագիր, թերեւս նորա ընկերներից մէկը, իւր պատմութիւնը վերագրելով Տրդատի քարտուղար հռոմ Ագաթանգեղոսին։ Այսպիսի կեղծիք են մեր մատենագրութեան մէջ՝ նաեւ ասորի Մար-Աբասն ու Զենորը։

Եթէ ուղիղ է մեր այս տեսակէտը՝ ուրեմն բանասիրութեան հերթական խնդիրը պէտք է լինի՝ ուսումնասիրել Փ.ի պատմութեան աղբիւրները, գրաւոր եւ անգիր, սահմանել անգիր աւանդութիւնների ու վէպերի գաւառները գրքի մէջ, որոշել Հայոց այս կրօնական-աշխարհական Շահնամի մէջ վիպականը պատմականից, առասպելականը իրականից, եւ այնուհետեւ միայն օգտուել նորանից՝ պատմական եւ ազգագրական աշխատութիւնների մէջ։ Իսկ առանց այսպիսի նախապատրաստական ուսումնասիրութեան Փ.ից իբրեւ ստոյգ պատմութիւնից օգտուելը վաղաժամ է եւ սխալ եղրակացութիւնների կը բերէ։





(1n204)

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220033717

A $\frac{II}{33717}$